

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ  
ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԿԱՄՈՅԻ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔ

## Ծ Ր Ա Գ Ի Ր

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ  
ԿԱՄՈՅԻ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ 2017-2021 ԹՎԱԿԱՆՆԵՐԻ  
ԶԱՐԳԱՑՄԱՆ ՀՆԳԱՄՅԱ

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

1. ՀԱՄԱՅՆՔԻ ԻՐԱՎԻՃԱԿԻ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ
- 1.1. ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՀԻՄՆԱԴՐՄԱՆ ՄԱՍԻՆ
- 1.2. ՀԱՄԱՅՆՔԻ ԱՇԽԱՀՐԱԳՐԱԿԱՆ ԴԻՐՔԸ, ՌԵԼԻԵՖԸ
- 1.3. ԺՈՂՈՎՐԴԱԳՐՈՒԹՅՈՒՆ
- 1.4. ՏԵՂԱԿԱՆ ԻՆՔՆԱԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՄԱՐՄԻՆՆԵՐ
- 1.5. ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ԳՈՒՅՔԻ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ
- 1.6. ՇՐՋԱԿԱ ՄԻՋՎԱՅՐԻ ՊԱՀՊԱՆՈՒԹՅՈՒՆԸ
- 1.7. ԲՆԱԿԱՐԱՆԱՅԻՆ ՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆԸ
- 1.8. ԽՄԵԼՈՒ ԵՎ ՈՌՈԳՄԱՆ ՋՈՒՐ
- 1.9. ՏՐԱՆՍՊՈՐՏ ԵՎ ԿԱՊ
- 1.10. ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԿԱՊԵՐ ԵՎ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ
- 1.11. ՀՈՂԱՏԱՐԱԾՔՆԵՐ
- 1.12. ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆԸ
- 1.13. ԱՐԴՅՈՒՆԱԲԵՐՈՒԹՅՈՒՆԸ
- 1.14. ԿՐԹՈՒԹՅՈՒՆ, ՄՇԱԿՈՒՅԹ, ՍՊՈՐՏ ԵՎ ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅՈՒՆ
- 1.15. ՀԱՄԱՅՆՔԻ ՈՒԺԵՂ ԿՈՂՄԵՐԸ
- 1.16. ՀԱՄԱՅՆՔԻ ԹՈՒՅԼ ԿՈՂՄԵՐԸ
- 1.17. ՀԱՄԱՅՆՔԻ ՀՆԱՐԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ
- 1.18. ՀԱՄԱՅՆՔԻՆ ՍՊԱՌՆԱՑՈՂ ՎՏԱՆԳՆԵՐԸ
2. ՀԱՄԱՅՆՔԻ ՌԱԶՄԱՎԱՐՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՀԻՄՆԱԿԱՆ ՆՊԱՏԱԿՆԵՐԸ
- 2.1. ՀԱՄԱՅՆՔԻ ՌԱԶՄԱՎԱՐՈՒԹՅՈՒՆԸ
- 2.2. ՀԻՄՆԱԿԱՆ ՆՊԱՏԱԿՆԵՐԸ
3. ՀԱՄԱՅՆՔԻ ԲՅՈՒՋԵԻ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐԻ ԳՆԱՀԱՏՈՒՄ ԵՎ ԿԱՆԽԱՏԵՍՈՒՄ
- 3.1. ՀԱՄԱՅՆՔԻ ԲՅՈՒՋԵԻ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ
- 3.2. ՀԱՄԱՅՆՔԻ ԲՅՈՒՋԵԻ ԳՆԱՀԱՏՈՒՄ ԵՎ ԿԱՆԽԱՏԵՍՈՒՄ
- 3.3. ՀԱՄԱՅՆՔԻ ՋԱՐԳԱՑՄԱՆ ՔԱՌԱՄՅԱ ԾՐԱՔՐՈՒՄ ՆԵՐԱՌՎԱԾ ԱՌԱՋՆԱՀԵՐԹ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԲՅՈՒՋԵՈՎ ՆԱԽԱՏԵՍՎԱԾ ՆԵՐԴՐՈՒՄՆԵՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ
- 3.4. ՀԱՄԱՅՆՔԻ ԲՅՈՒՋԵԻ ԱՊԱՌՔՆԵՐԻ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ
- 3.5. ՀՈՂԻ ՀԱՐԿԻ ԵՎ ԳՈՒՅՔԱՀԱՐԿԻ ԱՊԱՌՔՆԵՐԻ ՀԱՎԱՔԱԳՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ
- 3.6. ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅՈՒՆ ` ՎԵՐՋԻՆ 10 ՏԱՐԻՆԵՐԻՆ ՀԱՄԱՅՆՔՈՒՄ ԻՐԱԿԱՆԱՑՎԱԾ ԾՐԱԳՐԵՐԻ ՄԱՍԻՆ
4. ԸՍՏ ԱՌԱՆՁԻՆ ԲՆԱԳԱՎԱՌՆԵՐԻ ԱՌԱՋՆԱՀԵՐԹ ԾՐԱԳՐԵՐԻ, ՆՊԱՏԱԿՆԵՐԻ ԱՌԱՋԱԴՐՈՒՄ ԵՎ ԿՈՆԿՐԵՏ ԽՆԴԻՐՆԵՐԻ ՁԵՎԱԿԵՐՊՈՒՄ
5. ՀԱՄԱՅՆՔԻ ՋԱՐԳԱՑՄԱՆ ՀՆԳԱՄՅԱ ԾՐԱԳՐԻ ՀԻՄՆԱԿԱՆ ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐԸ

## ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Կամոյի համայնքի 2016-2020 թվականների հնգամյա զարգացման ծրագիրը մշակված է Հայաստանի Հանրապետության Սահմանադրությամբ և օրենքներով տեղական ինքնակառավարման մարմիններին վերապահված իրավասությունների շրջանակներում և հանդիսանում է հնգամյա ժամկետում համայնքի համալիր զարգացմանն ուղղված ռազմավարական ուղեցույց փաստաթուղթ:

Հնգամյա ծրագիրն իրենից ներկայացնում է համայնքի սոցիալ – տնտեսական իրավիճակի վերլուծության, առկա հիմնախնդիրների բացահայտման, ֆինանսական, տնտեսական և մարդկային ռեսուրսների գնահատման արդյունքում նպատակային զարգացման տեսանկյունից ձեռնարկվելիք քայլերի ամբողջությունն արտահայտող փաստաթուղթ: Այն նախատեսում է համայնքի տեղական ինքնակառավարման մարմինների ռազմավարական քաղաքականությամբ համայնքի հիմնախնդիրների արդյունավետ լուծումը և բյուջետավորման նպատակային գործընթացի իրականացումը: Ծրագիրը ձևավորվել է համայնքի վրա արտաքին միջավայրի ազդեցության համակողմանի վերլուծության, սոցիալ-տնտեսական ներքին իրավիճակի գնահատման, առկա և ներուժային հնարավորությունների /բնական, աշխարհագրական, տնտեսական, սոցիալական, ֆինանսական, մարդկային/ հաշվառման արդյունքում:

Ծրագիրն ավելի իրատեսական դարձնելու համար գնահատվել են համայնքի ուժեղ և թույլ կողմերը, դասակարգվել են առաջնային և հրատապ լուծում պահանջող հիմնախնդիրները, վերլուծվել են համայնքի ֆինանսական, աշխատանքային, նյութատեխնիկական ռեսուրսներն ու տնտեսական հնարավորությունները: Առաջադրվել են ծրագրային աշխատանքներ, որոնցում տրվել են առկա հիմնախնդիրների նկարագրությունները, լուծման ուղիները, պահանջվող ֆինանսական միջոցները, ֆինանսավորման աղբյուրները, ակնկալվող արդյունքները, իրականացվելիք ծրագրերի կենսունակության ապահովման հիմնավորումները, ինչպես նաև կատարման ժամկետներն ու պատասխանատուները: Կատարվել են սոցիալ-տնտեսական իրավիճակի վերլուծություններ և կանխատեսումներ, ներկայացվել են համայնքի ներկա իրավիճակը բնութագրող վիճակագրական տեղեկություններ:

Ծրագրում ներառված խնդիրները և դրանց առաջնահերթությունները չեն հավակնում լինել վերջնական և ծրագրերի իրականացման ընթացքում կախված արտաքին ու ներքին գործոնների ազդեցությունից կարող են ենթարկվել փոփոխությունների ու լրացումների:

1. ՀԱՄԱՅՆՔԻ ԻՐԱՎԻՃԱԿԻ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ

1.1. ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՀԻՄՆԱԴՐՄԱՆ ՄԱՍԻՆ

Կամո գյուղը հիմնվել է 1772թվականին Մուշից գաղթած հայ ընտանիքների բնակեցումից:

Գյուղը հիմնադրման օրվանից կոչվել է Հաջինազար,միայն 1935թվականին գյուղը անվանակոչվել է Կամո:

Ավելի ուշ 20-րդ դարի 20-ական թվականների վերջում գյուղում հաստատվել են Արևմտյան Հայաստանի մի քանի գավառներից Ալաշկերտի, Մուշի, Էրզրումի շրջաններից: 1831 թ-ին գյուղն ունեցել է 220, 1897 թ-ին` 980, 1926 թ-ին` 592, 1939 թ-ին` 962, 1959 թ-ին` 1200, 1989 թ-ին` 1500, 2016թ-ին 1508 հայ բնակիչ:

Գյուղի կենտրոնում կառուցվել են հուշարձաններ նվիրված Հայրենական մեծ պատերազմի և 1988 թվականին երկրաշարժի զոհերի հիշատակին: Գյուղի հարավային մասում 1,5կմ հեռավորության վրա գտնվում է Անտիկ բնակատեղի և դամբարանադաշտի տարածքը, որը թվագրում է մ.թ.ա 2-1հազարամյակը:

Գյուղը հյուսիս-արևելքից սահմանակցում է Ջաջուռ և Լոռու մարզի Խնկոյան համայնքներին, հարավ-արևելքից Կառնուտ համայնքին, արևմուտքից` Գյումրի քաղաքին և Ախուրյան համայնքին, Շիրակ գյուղական համայնքին:

Գյուղը ՀՀ կառավարության որոշման համաձայն ընդգրկված է հանրապետության լեռնային բնակավայրերի ցանկում:

Կամո գյուղը գտնվում է ծովի մակերևույթից 1700 մ բարձրության վրա: Մարզկենտրոն Գյումրիից հեռավորությունը կազմում է 13կմ, Ախուրյանից 9 կմ, իսկ մայրաքաղաքից` 130 կմ:

1915-1920-ական թվականների թուրք հրոսակների արշավանքների հետևանքով Արևելյան Հայաստանի գյուղերի ու քաղաքների մեծ մասը կողոպտվել ու ավերվել են: 1918 թվականին նշված հրոսակախմբերը մեծ ոճրագործություններ են իրականացրել Կարսում, Շիրակում, Լոռի-Փամբակում և Հայաստանի այլ շրջաններում: Այդ ողբերգական, արյունալի էջերից անմասն չի մնացել նաև Կամո գյուղը: Գյուղը մեծ սիրով ապաստան է տվել թուրքական յաթաղանից փրկված արևմտահայ գաղթական ընտանիքների, որոնց սերունդները ներկայումս բնակվում են գյուղում:

1921 թվականին բնակավայրում հաստատվել են խորհրդային կարգեր և մինչև 1996 թվականը ընդգրկված է եղել Ախուրյանի շրջանի կազմում: 1996 թվականին, Հայաստանի

Հանրապետության վարչատարածքային վերջին բաժանումից հետո, Կամո գյուղը որպես վարչական առանձին միավոր՝ ինքնուրույն համայնք, ընդգրկված է Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի կազմում:

Բնակավայրի հիմնադրումից ի վեր բնակչության հիմնական զբաղմունքը եղել և մնում անասնապահությունը, հացահատիկային, բանջարաբուստանային և կերային կուլտուրաների մշակությունը: Առանձին տնտեսություններ զբաղվում են թռչնաբուծությամբ, կարտոֆիլի և բանջարաբուստանային այլ մշակաբույսերի մշակությամբ:

Կամո գյուղի բնակելի տարածքը ավելացել է երկրաշարժից հետո, երբ կառուցվեցին բազմաթիվ բնակարաններ, սակայն դեռևս կան անօթևան և կարիքավոր ընտանիքներ: Գյուղում 2000թվականին շահագործման է հանձնվել քարաշեն միջնակարգ դպրոցը, վերանորոգվել է փոստի շենքը ժամանակակից տեխնիկայով, հանրային սննդի օյեկտ, , ժամանակավոր տարածքում գործում է գրադարանը և գյուղապետարանը: Կամո գյուղը կայուն տնտեսական աճ է ունեցել սկզբնական շրջանում՝ կուլեկտիվ, ապա խորհրդային տնտեսությունը: Այն աչքի է ընկել հատկապես կաթի և մսի, հացահատիկի արտադրության բարձր ցուցանիշներով:

Ներկայումս համայնքի աշխատունակ բնակչության հիմնական մասը զբաղված է գյուղացիական տնտեսությամբ ու արտագնա աշխատանքով: Վերջին 20 տարիների ընթացքում արտագնա աշխատանքի բերումով համայնքից արտագաղթել են ավելի քան 15 ընտանիքներ:

Գյուղի վարելահողերի գերակշռող մասը լեռնատափաստանային սևահողեր են, որի ռոտզման, պարարտացման և ագրոտեխնիկական կանոնների ճիշտ կիրառման դեպքում կարող է ապահովվել հացահատիկի և բանջարաբուստանային մշակաբույսերի կայուն և բարձր բերքատվություն:

Համայնքը բոլոր ժամանակներում մեծ կարևորություն է տվել սերունդների կրթության և դաստիարակության հարցերին: Կամոյի միջնակարգ դպրոցը ունեցել է բարի ավանդույթներ և ուսման բարձր առաջադիմություն:

Յուրանքանչյուր տարի դպրոցի տասնյակ շրջանավարտներ տեղ են զբաղեցրել հանրապետության հեղինակավոր պետական բարձրագույն ուսումնական հաստատություններում: Ներկայումս էլ բարձրագույն ուսումնական հաստատություններ են սովորում 18 ուսանող և տասնյակից ավելի միջին մասնագիտական հաստատություններում:

Համայնքը գիտության, մշակույթի և արվեստի ոլորտներում տվել է տասնյակ նշանավոր մարդիկ:

Կամո գյուղը ակտիվ մասնակցություն է ունեցել ինչպես Հայրենական Մեծ պատերազմին, այնպես էլ Արցախյան ազատամարտին:

Հայրենական Մեծ պատերազմում գյուղը տվել է **95 զոհ**:

Արցախյան ազատամարտի մասնակիցներ են համայնքի **11** կամավորականներ, Արցախի համար մշված մարտերում և սահմանների պաշտպանության ժամանակ գյուղը տվել է **2 զոհ**:

Կամո գյուղը ունի հայրենիքին նվիրյալ զինվորներ, որոնք պարգևատրվել են մեդալներով, շքանշաններով ու շնորհակալագրերով:

## **1.2. ՀԱՄԱՅՆՔԻ ԱՇԽԱՀՐԱԳՐԱԿԱՆ ԴԻՐՔԸ ԵՎ ՌԵԼԻԵՖԸ**

Կամո գյուղը գտնվում է Շիրակի դաշտի հյուսիսում, Շիրակի լեռների հարավային լանջին: Իր հողային տարածքով սահմանակից է հարավային մասով Շիրակի մարզի Ախուրյանի հողատարածքներին, իսկ արևելյան մասով Կառնուտի հողատարածքներին:

Համայնքի տարածքում տարեկան տեղումների քանակը կազմում է 350-450 մմ: Ամենացածր ջերմաստիճանը եղել է  $-33^{\circ}\text{C}$ , իսկ ամենաբարձրը՝  $+36^{\circ}\text{C}$ :

Այն ծովի մակերևույթից բարձր է 1700մ: Հուլիսի միջին ջերմաստիճանը կազմում է  $+18^{\circ}+22^{\circ}\text{C}$ : Ձմեռները չափավոր ցուրտ են, ամենացածր ջերմաստիճանը հունվար ամսին կազմում է  $-8^{\circ}-14^{\circ}\text{C}$ :

Ջերմաստիճանային տատանման ամպլիտուտը կազմում է  $91^{\circ}$ :

Կլիման չափավոր ցամաքային է, որպես խմելու ջուր օգտագործում են լեռների բնական աղբյուրի ջրերը: Ռոտգելի վարելահողերը կազմում են 828.3 հա:

Տարածքում գերակշռում են տափաստանային սևահողերը:

Համայնքի վարչական տարածքը կազմում է 2418.08 հա, որից գյուղատնտեսական նշանակության հողեր են 2100.28 հա, այդ թվում 906.5 հա վարելահող, 1109.43հա արոտ և 84.35 հա գյուղատնտեսական այլ հողատեսքեր: Ջրային ֆոնդի հողերը կազմում են 5.88 հա: Համայնքի կառուցապատված տարածքը զբաղեցնում է 159.43 հա.:

Բնակավայրը գտնվում է նախկին շրջկենտրոնից 9 կմ, մարզկենտրոնից 13 կմ և մայրաքաղաքից՝ 130 կմ հեռավորության վրա: Բնակավայրի հարևանությամբ է անցնում Գյումրի-Վանաձոր հանրապետական նշանակության ճանապարհը:

### 1.3 ԺՈՂՈՎՐԴԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Հայտնի պատմական տեղեկությունների համաձայն գյուղը ձևավորվել է 1772թ. Մուշից գաղթած հայ ընտանիքների կողմից: Գյուղը հիմնադրման օրվանից կոչվել է Հաջինագար, միայն 1935թվականին գյուղը անվանակոչվել է Կամո:

Ավելի ուշ 20-րդ դարի 20-ական թվականների վերջում գյուղում հաստատվել են Արևմտյան Հայաստանի մի քանի գավառներից Ալաշկերտի, Մուշի, Էրզրումի շրջաններից: 1831 թ-ին գյուղն ունեցել է 220, 1897 թ-ին՝ 980, 1926 թ-ին՝ 592, 1939 թ-ին՝ 962, 1959 թ-ին՝ 1200, 1989 թ-ին՝ 1500, 2016թ-ին 1508 հայ բնակիչ:

Գյուղի բնակչության թվաքանակը հիմնականում աճել է հետեղեռնյան շրջանում: Սակայն ներգաղթած ընտանիքների մեծ մասը հետագայում արտագաղթել են Հայաստանի այլ բնակավայրեր:

Վերջին 20 տարիներին համայնքի բնակչության թիվը նվազել է, արձանագրվել է բնակչության կազմի ծերացում: Ներկայումս համայնքի աշխատունակ բնակչության 50-60 տոկոսը մեկնում են արտագնա սեզոնային աշխատանքի, շարունակվում է հատկապես երիտասարդ ընտանիքների արտագաղթը համայնքից:

**ՀԱՄԱՅՆՔԻ ՍՈՑԻԱԼ-ԺՈՂՈՎՐԴԱՎԱՐԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳՐԵՐԸ (մարդ)**

*(Տվյալները լրացված են 2016 թ. հունվարի 1-ի դրությամբ)*

- Ընդամենը՝ մշտական բնակչություն - 1451,  
Այդ թվում՝ տղամարդ -727 , կին՝ - 724,
- Տնային տնտեսությունների թվաքանակը – 340,
- Առկա բնակչություն – 1498,
- Առկա տնային տնտեսությունների քանակը – 331,

***Բնակչության բաշխվածությունն ըստ ազգային պատկանելության (առկա բնակչություն)***

- Հայ – 1493,
- Ռուս – 3,

***Բնակչության բաշխումն ըստ տարիքային խմբերի (առկա բնակչություն)***

Նախադարձական տարիքի երեխաներ / 0 – 6 տարեկան / -119 ,

որից՝ մինչև 1 տարեկան – 14,

1-2 տարեկան – 23,

3-4 տարեկան – 43,

5-6 տարեկան – 39:

- Դարձածական տարիքի երեխաներ / 7 – 17տարեկան / - 200,

որից՝ 7-10 տարեկան – 80,

11-14 տարեկան – 58,

15-17 տարեկան – 62:

- Հասուն տարիքի բնակչություն / 18-64 / - 1046,

որից՝ 18-22 տարեկան – 129,

23-45 տարեկան – 576,

46-62 տարեկան –341 :

- Տարեց բնակչություն / 63 և ավելի / - 133:

- Համայնքի ընտրողների թիվը - 1120:

***Ծնունդ, մահ, ամուսնություն, ամուսնալուծություն (վերջին 3 տարիների միջին ցուցանիշ)***

- Ծնունդ - 18,

Որից կենդանի ծնունդ – 18,

- Մահ – 13,
- Ամուսնություն – 9,
- Ամուսնալուծություն – 0:

***Համայնքի սոցիալական խմբերի ներկայացվածությունը***

- Հաշմանդամներ – 23,  
այդ թվում կանայք՝ 17,  
որից՝ հաշմանդամ երեխա – 2,
- Միակողմանի ծնողազուրկ երեխա - 8,
- Ամուսնալուծված անձի երեխա – 0,
- Կենսաթոշակառուներ – 138,
- Միայնակ չաշխատող կենսաթոշակառուներ – 2,
- Տարեց կենսաթոշակառուներ /75 տարեկան և բարձր/ - 63,

***Համայնքի տնային տնտեսությունների սոցիալական խմբերի ներկայացվածությունը***

- Երեք և ավելի երեխաներ ունեցող /0-16 տարեկան/ – 26,
- Միայն կենսաթոշակառուներից կազմված /63 և ավելի տարեկան/ - 12,
- Հաշմանդամ երեխա ունեցող – 2,
- Մինչև 6 տարեկան երեխա ունեցող – 75,
- Ընտանեկան նպաստ ստացող տնային տնտեսությունների քանակը՝ 38:

***ԶԲԱՂՎԱԾՈՒԹՅՈՒՆ***

***Համայնքի բնակչության բաշխումն ըստ զբաղվածության հիմնական ճյուղերի (մարդ)***

- Գյուղատնտեսական ինքնազբաղվածություն – 981,
- Վարձու աշխատանք գյուղատնտեսական ոլորտում – 36,
- Վարձու աշխատանք ոչ գյուղատնտեսական ոլորտում, մասնավոր – 15,
- Վարձու աշխատանք պետական ոլորտում – 74,
- Ոչ գյուղատնտեսական ինքնազբաղվածություն – 6,
- Աշակետուներ /16 տարեկան և բարձր/ - 68,
- Ուսանողներ – 22,
- Բանակում ծառայողներ – 21,

- որից պայմանագրային՝ 8,
- պարտադիր զինվորական ծառայության մեջ գտնվող՝ 13,
- Չունեն գրադավածություն /տնտեսապես ոչ ակտիվ/ – 8,

***Համայնքում գրադավածների բաշխվածությունն ըստ ոլորտների***

- Գյուղատնտեսություն – 946,
- Հանքագործական արդյունաբերություն – 21,
- Էլեկտրաէներգիայի, գազի, ջրամատակարարման ոլորտի սպասարկում – 5,
- Շինարարություն – 8,
- Առևտուր և այլ սպասարկումներ – 4,
- Գյուղատնտեսական ծառայություններ – 23,
- Տրանսպորտ և կապ – 1,
- Տեղական ինքնակառավարում – 8,
- Կրթություն – 11,
- Առողջապահություն և սոցիալական ծառայություններ – 2,
- Կոմունալ, անհատական ծառայությունների մատուցում – 31,
- Ոսանողներ, ավարտական դասարանների աշակերտներ, բանակում ծառայողներ - 59:

***Միգրացիա /2016 թվականի ընթացքում/***

- Այլ բնակավայր տեղափոխված ընտանիքների թիվը – 3,  
որից՝ Հայաստանում այլ բնակավայր՝ 3:
- Արտերկիր՝ 0:
- Մշտական բնակության համար համայնք տեղափոխված ընտանիքների թիվը՝ 5,
- որից Հայաստանի այլ բնակավայրերից՝ 5:
- Արտագնա աշխատանքի մեկնողների թիվ – 120 (55 տնային տնտեսություններից):

***Համայնքի հասուն տարիքի բնակչության բաշխումն ըստ կրթամակարդակի***

- Տարրական – 48,
- հիմնական – 116
- միջնակարգ -822,

- միջնակարգ մասնագիտական – 150,
- բարձրագույն - 78:

#### **1.4.ՏԵՂԱԿԱՆ ԻՆՔՆԱԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՄԱՐՄԻՆՆԵՐԸ**

Ժողովրդի իշխանությունն իրականացնելու և համայնքային խնդիրները լուծելու նպատակով համայնքում օրենքով սահմանված կարգով ընտրված են համայնքի ավագանի /ավագանու 7 անդամ/ և համայնքի ղեկավար: 2016 թ. հոկտեմբերի 2-ին համայնքում կայացած համայնքի ղեկավարի ընտրությունների արդյունքներով համայնքի ղեկավար է վերընտրվել Ռոբերտ Ղազարյանը:

<<Տեղական ինքնակառավարման մասին>> և <<Համայնքային ծառայության մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքների համաձայն ձևավորվել է համայնքի ղեկավարի աշխատակազմ հետևյալ կառուցվածքով՝

##### **Հայեդողական պաշտոն**

Համայնքի ղեկավարի տեղակալ:

##### **Համայնքային ծառայության պաշտոններ՝**

1. Գյուղապետարանի աշխատակազմի քարտուղար – 1 միավոր,
2. գյուղապետարանի աշխատակազմի առաջատար մասնագետ-հաշվապահ – 1 միավոր,
3. գյուղապետարանի աշխատակազմի 1-ին կարգի մասնագետ – 1 միավոր:

##### **Տեխնիկական սպասարկում իրականացնող անձնակազմ**

1. Համակարգչի օպերատոր – 1 միավոր,
2. Գրադարանավար – 1 միավոր,
3. Հարկային գործակալ - 1 միավոր,
4. Պահակ- 1 միավոր

#### **ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ԿԱԶՄԸ**

<b>N</b>	<b>Անուն, ազանուն</b>	<b>Ծննդյան թիվը</b>	<b>Կրթությունը</b>	<b>Կուսակցական պատկանելությունը</b>
<b>1.</b>	Ավետիք Անտոնյան	1972	բարձրագույն	ԲԿ
<b>2.</b>	Հրանտ Բաղդասարյան	1952	բարձրագույն	Ռամկավար
<b>3.</b>	Էդվարդ Դրմեյան	1957	բարձրագույն	ՀՀԿ
<b>4.</b>	Գարիկ Հակոբյան	1971	միջնակարգ	Անկուսակցական

5.	Արմեն Ղազարյան	1979	միջն. մասն.	Անկուսակցական
6.	Արմեն Մանուկյան	1972	բարձրագույն	Անկուսակցական
7.	Էդիկ Մանուկյան	1984	միջնակարգ	Անկուսակցական

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԿԱՄՈՅԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ԵՎ  
ԳՅՈՒՂԱԴԵՏԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ԱՇԽԱՏԱԿԻՑՆԵՐԻ 2017 ԹՎԱԿԱՆԻ  
ՀԱՍՏԻՔԱՑՈՒՑԱԿԸ ԵՎ ՊԱՇՏՈՆԱՅԻՆ ԴՐՈՒՅՔԱԶԱՓԵՐԸ**

N	Պաշտոնի անվանումը	Հաստիքային միավորը	Պաշտոնյին դրույքաչափը	Ազգանուն, անուն	Ծննդյան թիվը	Կրթությունը
<i>Քաղաքական պաշտոն</i>						
1.	Համայնքի ղեկավար	1	264560	Ղազարյան Ռոբերտ	1956թ.	Միջնակարգ մասնագիտական
<i>Հայեցողական պաշտոն</i>						
1.	Համայնքի ղեկավարի տեղակալ	1	109792	Հովհաննիսյան Հակոբ	1965թ.	ՌԻՔամյա
<i>Համայնքային ծառայության պաշտոններ</i>						
1.	Աշխատակազմի քարտուղար /1.2-1/	1	171964	թափուր		
2.	Առաջատար մասնագետ-հաշվապահ /3.1-1/	1	158736	Հարեյան Գոհար	1962թ.	Միջն. մասնագիտական
3.	Առաջին կարգի մասնագետ /3.2-1/	1	152122	Մանուկյան Մարո	1957թ.	Միջնակարգ
<i>Տեխնիկական սպասարկում իրականացնող անձնակազմ</i>						
1.	Համակարգչի օպերատոր	1	100533	Բաղդասարյան Մկրտիչ	1983թ.	Բարձրագույն
2.	Հարկային գործակալ	1	100533	Հակոբյան Հակոբ	1952թ.	Միջնակարգ
2.	Գրադարանավար	1	89950	Ղազարյան Գայանե	1982թ.	Բարձրագույն
3.	Պահակ	1	93654	Հովհաննիսյան Աննա	1962թ.	Միջնակարգ
Աշխատակազմի աշխատակիցների քանակը		8 (ութ)				

**1.5. ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՅՈՂ ԳՈՒՅՔԻ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ**

Բնակավայրի խմելու ջրի ներտնտեսային համակարգը կառուցվել է 1960-ական թվականներին: Համայնքը սնուցող ջրագծով գյուղ է մտնում վայրկյանում 9 լիտր խմելու ջրի, որը օրական կազմում է մոտ 800 հազար լիտր: Ջրամբարի տարողությունը կազմում է 240 հազար լիտր: Ցանցի քայքայվածության պատճառով հաճախակի են ջրագծերի վթարները, ջրի կորուստներն ու աղտոտումները: Վերանորոգման կարիք ունի ջրամատակարարման ներքին ցանցը:

Համայնքի ոռոգման համակարգը կառուցվել է 1978 թվականին և ունի 17,3 կմ ընդհանուր երկարություն: Այն նախատեսված է եղել 860 հա վարելահողերի ոռոգման համար: Ցանցի քայքայվածության պատճառով որոշ դաշտերում ոռոգում չի իրականացվում, իսկ գյուղամիջյան տնամերձ հողամասերը՝ մոտ 10 հա, ոռոգվում են պոմպակայանի ոռոգման ցանցի միջոցով:

Բնակավայրը կոյուղու համակարգ չունի:

Անբարեկարգ և քայքայված վիճակում են գտնվում ինչպես միջհամայնքային 0.4 կմ երկարությամբ ճանապարհը, այնպես էլ շուրջ 13,5 կմ ընդհանուր երկարության ներհամայնքային ճանապարհները: Դաշտամիջյան ճանապարհների ընդհանուր երկարությունը կազմում է 48 կմ, որի առանձին տեղամասերի քայքայվածության պատճառով այն գյուղատնտեսական տեխնիկայի համար դարձել է անանցանելի և լուրջ դժվարություններ է ստեղծվում գյուղատնտեսական աշխատանքների կատարման ժամանակ: Համայնքի ուժերով և ներգրավված միջոցներով պարբերաբար կատարվել են բնակավայր մտնող և ներհամայնքային ճանապարհների փոսայցման աշխատանքներ, սակայն այն բավարար համարել չի կարելի:

Համայնքապետարանը, գրադարանը գործում են ժամանակավոր կացարանում, իսկ բուժ. մանկաբարձական կետը 2005 թվականին մասնակիորեն նորոգվել է ԱՄՆ դեսպանության <<ՆՈՎԱ>> ծրագրի և համայնքի կողմից կատարված ներդրումների միջոցով:

<<Գյուղական տարածքների տնտեսական զարգացման ծրագրի>> շրջանակներում 1985 թվականին շահագործման է հանձնվել բնակավայրի գազաֆիկացման համակարգը: Բնական գազից օգտվում են համայնքի տնտեսությունների 90 տոկոսը:

**ՑԱՆԿ**  
**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԿԱՄՈ ՀԱՄԱՅՆՔԻ**  
**ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԳՈՒՅՔԻ**

N	Գույքի անվանումը	Չափի միավոր	Քանակ	Միավորի արժեքը / դրամ/	Հաշվեկշռային ընդհանուր արժեքը /դրամ/	Գույքի տեխնիկական վիճակի նկարագրությունը
1	Խմելու ջրի օրական կարգավորման ջրամբար	հատ	1	Գնահատված չէ	0.0	Ենթակա է վերանորոգման
2	Ջրամատակարարման ներքի ցանց	կմ	10,5	Գնահատված չէ	0.0	Ենթակա է վերանորոգման
3	Ոռոգման համակարգ	կմ	17,3	Գնահատված չէ	0.0	Ենթակա է հիմնանորոգման
4	Ներհամայնքային ճանապարհներ	կմ	13,5	Գնահատված չէ	0.0	Ենթակա է վերանորոգման
5	Դաշտամիջան ճանապարհներ	կմ	48	Գնահատված չէ	0.0	Ենթակա է վերանորոգման
6	DT-75 տրակտոր	հատ	1	Գնահատված է	402225	ոչ կոմպլեկտավորված, շահագործման ենթակա չէ
7	DT-75 տրակտոր	հատ	1	Գնահատված է	402225	շահագործվում է
8	T-16U տրակտոր	հատ	1	Գնահատված է	189185	ոչ կոմպլեկտավորված, շահագործման ենթակա չէ
9	Ավտոբուս ԽԸԹԻ	հատ	1	Գնահատված է	348241	շահագործման ենթակա չէ
10	Սիվա վագ 2121	հատ	1	Գնահատված է	236940	Առկա է միայն թափքը, գտնվում է քայքայված վիճակում
11	Սիվա վագ 21214	հատ	1	Գնահատված է	3300000	Շահագործման ենթակա է
12	Գարու պահեստ	հատ	1	Գնահատված է	1153500	Գտնվում է քայքայված վիճակում
13	Շարքացան	հատ	1	Գնահատված է	22516	ոչ կոմպլեկտավորված, շահագործման ենթակա չէ
14	Պարարտանյութ ցրող	հատ	1	Գնահատված է	22839	առկա է միայն ցրող ամբարը քայքայված վիճակում
15	Մամլիչ	հատ	1	Գնահատված է	65149	ոչ կոմպլեկտավորված, շահագործման ենթակա չէ
16	Երկաթյա տարրա	հատ	1	Գնահատված է	17302	
17	Պարիսպներ	գծմ	500	Գնահատված է		
18	Անավարտ բնակելի շենքեր	հատ	17	Գնահատված է	385050	
19	Երկաթյա խողովակ (ոռոգման)	մ	250	Գնահատված է		
20	Դաշնամուր	հատ	1	Գնահատված է	24229	
21	Գորգ	հատ	1	Գնահատված է	21801	

22	ուղեգորգ	հատ	6մ	Գնահատված է	1980	
23	Պահարան	հատ	1	Գնահատված է	3530	
24	Պահարան	հատ	1	Գնահատված է	3530	
25	Բազկաթոռ	հատ	2	Գնահատված է	8720	
26	Պահարան	հատ	1	Գնահատված է	5052	
27	Մահճակալ	հատ	64	Գնահատված է	591360	
28	Պահարան	հատ	3	Գնահատված է	4650	
29	Պահարան	հատ	2	Գնահատված է	2272	
30	Գրադարակ	հատ	7	Գնահատված է	2505	
31	Փոքր սեղան	հատ	6	Գնահատված է	7920	
32	Փոքր սեղան	հատ	1	Գնահատված է		
33	Գրատախտակ	հատ	1	Գնահատված է		
34	Գրասեղան	հատ	1	Գնահատված է	4464	
35	Գրասեղան	հատ	1	Գնահատված է	9066	
36	Երկաթյա պահարան	հատ	5	Գնահատված է	4498	
37	Դիմադիր	հատ	1	Գնահատված է	4360	
38	Չեռախոս	հատ	1	Գնահատված է	5000	
39	Չամկարգիչ	հատ	1	Գնահատված է	210000	
40	Մոնիտոր	հատ	1	Գնահատված է	90000	
41	Տպիչ	հատ	1	Գնահատված է	100000	
42	Գրասեղանի կոմպլեկտ	հատ	1	Գնահատված է	12000	
43	Գազի վառարան	հատ	2	Գնահատված է	116000	
44	Չեռախոս	հատ	1	Գնահատված է	15000	
45	Գրքային ֆոնդ	հատ	8418	Գնահատված է		
46	Չամկարգիչ	հատ	1	Գնահատված է	220000	
47	Գերեզմանատան ցանկապատ ցանցով	գծմ	800	Գնահատված է	3514600	
48	Գիշերային լուսավորություն	հատ	37	Գնահատված է	1755000	
49	Օֆիսի աթոռ	հատ	1	Գնահատված է	55000	
50	Ղեկավարի սեղան	հատ	1	Գնահատված է	175000	
51	Օֆիսի սեղան	հատ	2	Գնահատված է	100000	

52	Աթոռ	հատ	6	Գնահատ- ված է	75000	
53	Սնուցման սարք	հատ	1	Գնահատ- ված է	50000	
54	Համակարգիչ	հատ	1	Գնահատ- ված է	221000	
55	Մոնիտոր	հատ	1	Գնահատ- ված է	60000	
56	Անխափան սնուցման սարք	հատ	1	Գնահատ- ված է	22000	
57	ստեղնաշար, մկնիկ	հատ	2	Գնահատ- ված է	6000	
58	Խմելու ջրագիծ	հատ		Գնահատ- ված է	4553277	
59	Քարաշեն կանգառ		1	Գնահատ- ված է	287600	
28.	Նստարաններ		6հատ	Գնահատ- ված է	390000	
29.	Համակարգիչ G1620		1հատ	Գնահատ- ված է	156000	
30.	Հեռուստացույց LG 22		1հատ	Գնահատ- ված է	120000	
31.	տպիչ	հատ	1 հատ	Գնահատ- ված է	128000	
28.	Մարզահրապարակի ցանկապատ	հատ		Գնահատ- ված է	979570	

## 1.6.ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՊԱՀՊԱՆՈՒԹՅՈՒՆ

Բնակավայրը կոյուղացված չէ:

Բնակավայրում կանոնակարգված աղբահանություն չի իրականացվում: Կենցաղային աղբը համայնքից հեռացվում է տնային տնտեսությունների և գյուղապետարանի կողմից կազմակերպվող սանիտարական մաքրման օրերի միջոցով:

Բնակավայրը չունի համայնքային նշանակության հանգստի գոտի: Հատկապես ամռան ժամանակաշրջանում բարձր է օդի փոշոտվածությունը:

Բնակավայրում վտանգավոր արտանետումներ չկան:

## 1.7.ԲՆԱԿԱՐԱՆԱՅԻՆ ՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆԸ

Համայնքում կա 336 բնակելի տներ՝ 48226 քառ.մ ընդհանուր մակերեսով: Բոլոր բնակելի տները կառուցվել են 1937-1998 թթ. ժամանակ: Բնակելի տները սեփականաշնորհված են և հանդիսասանում են համայնքի բնակիչների սեփականությունը: Բնակավայրը գտնվում է 1988թ. Սպիտակի աղետալի երկրաշարժի գոտում: Համայնքի բնակֆոնդի մոտ 50 %-ը ստացել է 3-4 աստիճանի վնասվածություն և նրանց մեծ մասը ենթակա է ուժեղացման ու վերանորոգման:

Բնակարանային պայմանների բարելավման կարիք ունեն համայնքի 15 երիտասարդ ընտանիքներ:

Համայնքում կա 12 բնակելի տների անավարտ շինարարություն, որոնք շորջ 20 տարի է ինչ դադարեցված են՝ կառուցողների ոչ բավարար ֆինանսական հնարավորությունների պատճառով:

### ԲՆԱԿԵԼԻ ՏՆԵՐԻ ԲԱՇԽՈՒՄՆ ԸՍՏ ՍԵՆՅԱԿՆԵՐԻ ԹՎԻ

N	Սենյակների թիվը	Կառուցման տարեթիվը	Բնակարանների թիվը	Բնակարանների ընդհանուր մակերեսը /քառ.մ/	Սեյսմոկայունությունը
	Ընդամենը բնակարաններ	մինչև 2016թթ.	336	48226	9
1.	1 սենյականոց բնակարան	-	-	-	-
2.	2 սենյականոց բնակարան	-	-	-	-
3.	3 սենյականոց բնակարան	մինչև 2016թթ.	175	30116	9
4.	4 սենյականոց բնակարան	մինչև 2016թթ.	161	18110	9

## 1.8. ԽՄԵԼՈՒ ԵՎ ՈՌՈԳՄԱՆ ՋՈՒՐ

Բնակավայրի խմելու ջրի ներտնտեսային համակարգը կառուցվել է 1960-ական թվականներին: Համայնքը սնուցող ջրագծով գյուղ է մտնում վայրկյանում 9 լիտր խմելու ջուր, որը օրական կազմում է մոտ 800 հազար լիտր: Ջրամբարի տարողությունը կազմում է 240 հազար լիտր: Ցանցի քայքայվածության պատճառով հաճախակի են ջրագծերի վթարները, ջրի կորուստներն ու աղտոտումները: Վերանորոգման կարիք ունի ջրամատակարարման ներքին ցանցը:

Համայնքի ոռոգման համակարգը կառուցվել է 1978 թվականին և ունի 17,3 կմ ընդհանուր երկարություն: Այն նախատեսված է եղել 860 հա վարելահողերի ոռոգման համար: Ցանցի քայքայվածության պատճառով որոշ դաշտերում ոռոգում չի իրականացվում, իսկ գյուղամիջյան տնամերձ հողամասերը՝ մոտ 10 հա, ոռոգվում են պոմպակայանի ոռոգման ցանցի միջոցով:

Բնակավայրը կոյուղու համակարգ չունի:

## 1.9. ՏՐԱՆՍՊՈՐՏ ԵՎ ԿԱՊ

Անբարեկարգ և քայքայված վիճակում են գտնվում ինչպես միջհամայնքային 3 կմ երկարությամբ ճանապարհը, այնպես էլ շուրջ 13,5 կմ ընդհանուր երկարության ներհամայնքային ճանապարհները: Դաշտամիջյան ճանապարհների ընդհանուր երկարությունը կազմում է 48 կմ, որի առանձին տեղամասերի քայքայվածության պատճառով այն գյուղատնտեսական տեխնիկայի համար դարձել է անանցանելի և լուրջ դժվարություններ է ստեղծվում գյուղատնտեսական աշխատանքների կատարման ժամանակ: Համայնքի ուժերով և ներգրավված միջոցներով պարբերաբար կատարվել են բնակավայր մտնող և ներհամայնքային ճանապարհների փոսալցման աշխատանքներ, սակայն այն բավարար համարել չի կարելի::

Բնակավայրում գործում է փոստային բաժանմունք:

Համայնքում առկա է բնակիչների սեփականությունը հանդիսացող մարդատար ավտոմեքենա:

Բնակավայրը ապահովված է <<ՎԻՎԱՍԵԼ ՄՏՍ>>, <<ՕՐԱՆԺ>>, <<ԲԻԼԱՅՆ>> բջջային և <<Արմենտելի>> կողմից սպասարկվող ֆիքսված հեռախոսակապով: Ֆիքսված հեռախոսակապով են ապահովված համայնքի 60 տնտեսություններ:

Բնակավայրն ընդունում է 9 թվային հեռուստաալիքներ: Բավարար է ինտերնետային կապը:

Բնակավայր - մարզկենտրոն տրանսպորտային կապն ապահովվում է միկրոավտոբուսի 2 երթուղիների միջոցով: Մեկ ուղևորի փոխադրավարձը կազմում է 150 դրամ:

Մայրաքաղաքի և հարևան համայնքների հետ կապն ապահովվում է Գյումրի-Երևան երթուղային ավտոբուսների և միկրոավտոբուսների միջոցով:

## **1.10. ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԿԱՊԵՐ ԵՎ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ**

Համայնքը համախմբված է:

Բնակչությունը սերտ կապեր ունի մայրաքաղաքի, մարզկենտրոնի, նախկին շրջկենտրոնի և շրջակա բոլոր համայնքների հետ:

Համայնքը համագործակցում է ինչպես հանրապետությունում գործող քաղաքական և հասարակական կազմակերպությունների, այնպես էլ միջազգային կազմակերպությունների ու հիմնադրամների հետ:

Համայնքն անդամակցում է «Հայաստանի համայնքների միություն» իրավաբանական անձանց միությանը, համագործակցության կապեր ունի «Գյուղական տարածքների տնտեսական զարգացման» ծրագրի, «Հայաստան համահայկական հիմնադրամի», «Սոցիալական ներդրումների հիմնադրամի», «Գյուղական բարեփոխումների աջակցության ծրագրի», ՄԱԿ-ի ՀՊԾ «Սնունդ աշխատանքի դիմաց» ծրագրի, «Շիրակ հասարակական կազմակերպությունների միություն» ՀԿ-ի, «Շիրակի հասարակական կազմակերպությունների միություն» ՀԿ-ի, ներդրումային այլ կազմակերպությունների ու հիմնադրամների հետ:

Հոգևոր ոլորտում համայնքը համագործակցում է Շիրակի Առաջնորդարանի և Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի հետ:

## **1.11. ՀՈՂԱՏԱՐԱԾՔՆԵՐ**

Համայնքի վարչական տարածքը կազմում է 2418.08 հա, որից`

1. գյուղատնտեսակն նշանակության հողեր – 2100.28 հա,

այդ թվում`

- վարելահողեր – 906.5 հա,

այդ թվում`

սեփականաշնորհված – 828.3 հա,

համայնքային սեփականության – 78.2 հա,

- արոտներ – 1109.43 հա.
- այլ հողատեսքեր – 84.35 հա:

Վարելահողերի մեկ հեկտարից ստացվող զուտ եկամտի կադաստրային միջին գնահատականը կազմում է 45500 դրամ, իսկ արոտների՝ 10700 դրամ:

Սեփականաշնորհված վարելահողերի մեկ հողաժնի չափը կազմում է 1.3 հա.

1. Բնակավայրի հողեր – 159.43 հա.
2. Արդյունաբերական, արտադրական նշանակության հողեր 4.15 հա.
3. Ճանապարհների տակ օգտագործվող հողեր – 2.47 հա.
4. Պատմամշակութային նշանակության հողեր – 35.12 հա.
5. Ջրային ֆոնդի հողեր – 5.88 հա.

### **1.12. ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆ**

Գյուղատնտեսության բնագավառի հիմնական ճյուղերը հացահատիկային կուլտուրաների և բանջարաբուստանային մշակաբույսերի մշակությունն ու անասնապահությունն են:

Համայնքում կազմավորված են 490 գուղացիական տնտեսություններ, որոնց կողմից մշակվում է 828.3 հա վարելահող և օգտագործվում 1149.3 հա արոտ: Համայնքի տնտեսությունների սեփականությունն է հանդիսանում 828.3 հա վարելահող, իսկ թվով 49 տնտեսությունների կողմից օրենքով սահմանված կարգով վաճակալված է 52.61 հա վարելահող: Համայնքում վարելահող չունեցող տնտեսություններ չկան:

Դաշտավարության բնագավառում տնտեսությունները հիմնականում զբաղվում են ցորենի, գարու, կերային մշակաբույսերի, մասամբ կարտոֆիլի, կաղամբի և բանջարաբուստանային այլ կուլտուրաների մշակությամբ: Գյուղատնտեսական մթերքների արտադրության արդյունավետությունը ուղղակիորեն կախված է բնակլիմայական պայմաններից: Ցանկատարածությունները մշտապես վտանգված են երաշտով, ցրտահարությամբ և կարկտահարությամբ, սակայն համայնքում գործում է 1 հակակարկտային կայան, որը պաշտպանում է 80 հա տարածք: Հացահատիկային կուլտուրաների միջին բերքատվությունը բնակլիմայական բարենպաստ պայմանների դեպքում կազմում է 35-45 ցենտներ, իսկ երաշտի, ցրտահարության կամ կարկտահարության դեպքում կորուստը կարող է կազմում է 50-80%: Բուսաբուծության

գարգացմանը մեծապես խոչընդոտում է ոռոգման համակարգի քայքայվածությունը, լավորակ սերմերի բացակայությունը, գյուղատնտեսական մեքենաների ու գործիքների մաշվածությունն ու պակասը, դիզելային վառելանյութի, պարարտանյութերի և թունաքիմիկատների բարձր գները:

Բուսաբուծության բնագավառում վերջին 10 տարիներին արձանագրվել է հացահատիկի և կարտոֆիլի արտադրության ծավալների նվազում:

Գյուղացիական տնտեսությունների կողմից պահվում է 1243 գլուխ խոշոր եղջերավոր անասուններ, այդ թվում կովեր՝ 607 գլուխ, ոչխարներ և այծեր՝ 2422 գլուխ, խոզեր 63 գլուխ: Առանձին տնտեսություններ զբաղվում են նաև թռչնաբուծությամբ /հավեր՝ 2570 թև/ և մեղվապահությամբ /30 մեղվաընտանիք/:

Անասնապահության բնագավառում վերջին 10 տարիներին համայնքում արձանագրվել է մսի և կաթի արտադրության ծավալների ավելացում:

Գյուղում կա տրակտոր, 3 կոմբայն, 1 խոտհնձիչ, 13 բեռնատար ավտոմեքենա, տասնյակ գյուղատնտեսական գործիքներ ու մեխանիզմներ:

Գյուղտնտեսական մեքենաներն ու մեխանիզմները բարոյապես ու ֆիզիկապես մաշված են, կա գյուղատնտեսական տեխնիկայի և պահեստամասերի մեծ պահանջարկ:

**ՀԱՄԱՅՆՔԻ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ՈՒՈՐՏԻ 2016 ԹՎԱԿԱՆԻ ՀԻՄՆԱԿԱՆ ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐԸ**

**1. Գյուղատնտեսական նշանակության հողերի օգտագործումը**

Հողատեսքի անվանումը	2016թվական	
	Քանակը /հա/	Որից օգտագործվում է /հա/
Ընդամենը գյուղատնտեսական նշանակության հողեր, որից՝	2100.28	856.5
Վարելահող	906.5	856.5
Բազմամյա տնկարկներ	0.0	0.0
Խոտհարքներ	0.0	0.0
Արոտավայրեր	1109.43	0.0
Այլ գյուղատնտեսական հողեր	84.35	0.0

**2. Հիմնական մշակաբույսերի ցանքատարածությունների կառուցվածքը**

Ցանքատարածությունների կառուցվածքը	2016 թվական		% -ը վարելահողերի ընդհանուր
	Քանակը /հա/	Մեկ հեկտարից ստացվող միջին	

			բերքը /բերքատվություն/ տոննա	քանակի նկատմամբ /906,5հա/
<b>1.</b>	<b>Ընդամենը հացահատիկային մշակաբույսեր, այդ թվում՝</b>	<b>528</b>	<b>3.5</b>	<b>58.2</b>
	Ցորեն	310	4,0	34.1
	Գարի	218	3.0	24.0
	Այլ հացահատիկային մշակաբույսեր	0.0	0.0	0.0
<b>2.</b>	<b>Ընդամենը կերային մշակաբույսեր, այդ թվում՝</b>	<b>247</b>	<b>5.0</b>	<b>27.2</b>
	Կորնզան	38.6	5.0	4.2
	Աովույտ	129.9	5.0	14.3
<b>3.</b>	<b>այլ</b>	<b>78.6</b>	<b>5.0</b>	<b>8.6</b>
<b>4.</b>	<b>Ընդամենը բանջարաբուստանային մշակաբույսեր, այդ թվում՝</b>	<b>30</b>	<b>4,0</b>	<b>3.3</b>
	Կարտոֆիլ	78.0	15,0	X
	Կաղամբ		10.0	X
	Գազար	0.5	2.0	X
	Բանջարաբուստանային այլ մշակաբույսեր	0.5	2.0	X
	<b>ԸՆԴԱՄԵՆԸ</b>	<b>883.0</b>	<b>X</b>	<b>X</b>

**3. Հիմնական մշակաբույսերի միջին համախառն բերքը /բերքատվություն/**

Մշակաբույսի տեսակը	2012 թվական
<b>Հացահատիկ</b>	
Ցանքատարածքը /հա/	528
1 հեկտարի միջին բերքատվությունը /տոննա/	3,5
Համախառն բերքը/տոննա/	1848
<b>Կերային մշակաբույսեր</b>	
Ցանքատարածքը	247
1 հեկտարի միջին բերքատվությունը /տոննա/	5,0
Համախառն բերքը/տոննա/	1235,0
<b>Կարտոֆիլ</b>	
Ցանքատարածքը	78
1 հեկտարի միջին բերքատվությունը/տոննա/	15,0
Համախառն բերքը/տոննա/	1170
<b>Կաղամբ</b>	
Ցանքատարածքը	2.2
1 հեկտարի միջին բերքատվությունը /տոննա/	2.5

Համախառն բերքը/տոննա/	55.0
<b>Բանջարաբուստանային այլ մշակաբույսեր</b>	
Ցանքատարածքը	30
1 հեկտարի միջին բերքատվությունը/տոննա/	22,0
Համախառն բերքը/տոննա/	660,0

**4. Անասնազրիսաբանակը**

Գյուղատնտեսական կենդանիների տեսակները	/գլուխ/ 01.01.2016թ. հաշվառման տվյալներով
	Խոշոր եղջերավոր անասուններ
որից՝ կովեր	607
ոչխարներ և այծեր	2422
Խոզեր	63
թռչուններ	2570
մեղվաբնտանիքներ	30

**5. Անասնապահական մթերքների արտադրության ծավալները և անասունների մթերատվությունը**

Անասնապահական մթերքի տեսակը	2016 թվական
<b>Մթերատվությունը</b>	
Մեկ պայմանական գլուխ խոշորի մթերատվությունը, տոննա	120
1 կովի կաթնատվությունը /լիտր/	1500
1 ոչխարի բրդատվությունը /կգ/	2.6
1 հավի ձվատվությունը /հատ/	150
1 մեղվաբնտանիքի մթերատվությունը /կգ/	10.0
<b>Արտադրության ծավալները</b>	
Մսի արտադրություն /տոննա/	26.8
Կաթի արտադրություն /տոննա/	680.0
Բրդի արտադրություն /տոննա/	0.9
Չվի արտադրություն /հազ. հատ/	300.0
Մեղրի արտադրություն /տոննա/	1.6

**6. Համայնքում առկա գյուղատնտեսական մեքենաներ ու գործիքներ**

Գյուղատնտեսական մեքենաների ու գործիքների անվանումը	Չափի միավոր	Քանակը
Թրթուրավոր տրակտոր	հատ	7
Անվավոր տրակտոր	հատ	13
Հացահատրկային կոմբայն	հատ	4
Խոտհնձիչ կոմբայն	հատ	2
Բեռնատար ավտոմեքենա	հատ	37
Տրակտորային կցասայլ	հատ	8
Գուրթան	հատ	7
Կուլտիվատոր	հատ	7
Շարքացան	հատ	7
Հակավորող մեքենա	հատ	5

**1.13. ԱՐԴՅՈՒՆԱԲԵՐՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՍՊԱՍԱՐԿՈՒՄՆԵՐ**

Մինչև 1990 թվականը համայնքի աշխատունակ բնակչության 15-20 տոկոսը զբաղվածություն են ունեցել Գյումրու արտադրական ձեռնարկությունում, շինարարական և գյուղատնտեսության սպասարկման տարբեր կազմակերպություններում:

Համայնքում գործում է առևտրի 3 օբյեկտ, որոնք բավարարում են բնակչության սպառման պահանջները: Գործում է մեկ այլրադաց, որի ծառայությունից օգտվում են ինչպես համայնքի, այնպես էլ հարակից տարածքների բնակիչները:

Համայնքում հանրային սննդի և կենցաղային սպասարկման օբյեկտներ չեն գործում:

**1.14. ԿՐԹՈՒԹՅՈՒՆ, ՄՇԱԿՈՒՅԹ, ՍՊՈՐՏ ԵՎ ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅՈՒՆ**

Համայնքն ունի 200 աշակերտ/տեղով հանրակրթական մեկ դպրոց, որտեղ ներկայումս սովորում են 161 աշակերտներ:

Դպրոցը կառուցվել է 2000 թվականին: Դպրոցն ունի 20 մանկավարժ և 13 սպասարկող անձնակազմ, մանկավարժներից 19-ն ունեն բարձրագույն կրթություն, որից 16-ը կանայք են:

2014թվականին դպրոցում անցկացվել է ջեռուցման համակարգ՝ համայնքապետարանի ներդրմամբ և Վորլդ Վիժնի աջակցությամբ: Դպրոցն հիմնականում ապահովված է

անհրաժեշտ գույքով և ուսումնա-մեթոդական նյութերով, սակայն ապահոված չէ ժամանակակից սարքավորումներով: Դպրոցը չունի նաև սպորտդահլիճ:

**Աշակերտների բաշխումն ըստ դասարանների**

N		Աշակերտների թիվը	Դպրոցում ընդգրկված աշակերտների թիվը ըստ տարիքային խմբերի			
1.	Դպրոցահեն նախակրթարան	10	3-6 տարեկան			
			Տղա		Աղջիկ	
			8		2	
2.	Տարրական դպրոց /1-4-րդ դասարաններ/	59	Մինչև 7 տարեկան		7 տարեկանից բարձր	
			Տղա	Աղջիկ	Տղա	Աղջիկ
			10	10	20	19
3.	Միջին դպրոց /5-9-րդ դասարաններ/	65	Տղա		Աղջիկ	
			40		25	
4.	Ավագ դպրոց /10-12-րդ դասարաններ/	27	Տղա		Աղջիկ	
			10		17	
	Ընդամենը	161	82		79	

Համայնքն ունի մարզադաշտ, որը ցանկապատվել է համայնքի միջոցներով:

Համայնքի բնակչության առողջապահական սպասարկումն իրականացվում է Ջաջուռի, Ախուրյանի և Գյումրի քաղաքի առողջության կենտրոնների և համայնքի բուժ. մանկաբարձական կետի միջոցով, որտեղ աշխատում են 2 բուժքույր: Համայնքի բուժ. մանկաբարձական կետը մասնակի նորոգվել է 2005 թվականին Հայաստանում ԱՄՆ դեսպանատան <<ՆՈՎԱ>> ծրագրի աջակցությամբ և համայնքի կողմից կատարված ներդրումների շնորհիվ:

### **1.15. ՀԱՄԱՅՆՔԻ ՈՒՃԵՂ ԿՈՂՄԵՐԸ**

- Բերրի վարելահողերի առկայությունը.
- Լեռնային աղբյուրների ջրերի մեծ պաշարների առկայությունը.
- Բարձրագույն և միջնակարգ մասնագիտական կադրերի, բանվորական աշխատուժի առկայությունը.
- Համայնքի բնակչության համախմբվածությունը.
- Բնակլիմայական բարենպաստ պայմաններ.
- Հակակարկտային կայանի առկայությունը:

### **1.16. ՀԱՄԱՅՆՔԻ ԹՈՒՅԼ ԿՈՂՄԵՐԸ**

- Ոռոգման համակարգի քայքայվածությունը:
- 1988 թ. երկրաշարժի հետևանքով համայնքի բնակֆոնդին հասված վնասները:
- Համայնքի բնակչության սոցիալական անապահով վիճակը :
- Գյուղացիական տնտեսությունների արտադրական փոքր կարողությունները:
- Գյուղատնտեսական տեխնիկայի պակասը, առկա տեխնիկայի մաշվածությունը:
- Մշակույթի տան բացակայությունը;
- Մանկապարտեզի շենքի բացակայությունը:
- Հանգստի գոտու բացակայությունը:
- Միջհամայնքային, ներհամայնքային և դաշտամիջյան ճանապարհների քայքայվածությունը:
- Գործազրկության բարձր մակարդակը:
- Երիտասարդ ընտանիքների արտագաղթը համայնքից:

### **1.17. ՀԱՄԱՅՆՔԻ ՀՆԱՐԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ**

- Ոռոգման համակարգի կառուցում, դաշտավարության և անասնապահության ճյուղերի զարգացում:

- Երկարաժամկետ և մատչելի տոկոսադրույքներով գյուղատնտեսական նպատակային վարկերի տրամադրման և սուբսիդավորման միջոցով գյուղատնտեսական տեխնիկայի նորացում, գյուղատնտեսական մթերքների արտադրության ծավալների ավելացում, վերամշակման փոքր և միջին ձեռնարկությունների հիմնում:
- Այգեգործության և մեղվապահության ճյուղերի զարգացում:

### ***1.18. ՀԱՄԱՅՆՔԻՆ ՄՊԱՌՆԱՑՈՂ ՎՏԱՆՔՆԵՐԸ***

- Ուժեղ սեյսմիկ գոտում գտնվելը:
- Բնակլիմայական ոչ բարենպաստ պայմանները /երաշտ, կարկտահարություն, ցրտահարություն, ուժեղ քամիներ/:
- Խմելու ջրի ներտնտեսային ցանցի և ՕԿՁ –ի քայքայվածությունը, պոմպակայանի ոչ լիաժերք հզորությունը, խմելու ջրի կորուստներն ու աղտոտումները.
- Կոյուղաջրերի հեռացման ցանցի բացակայությունը.
- Մշակույթի տան և մանկապարտեզի շենքերի բացակայությունը.
- Երիտասարդ ընտանիքների արտագաղթը համայնքից:

## **2. ՀԱՄԱՅՆՔԻ ՌԱԶՄԱՎԱՐՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՀԻՄՆԱԿԱՆ ՆՊԱՏԱԿՆԵՐԸ**

### ***2.1. Համայնքի ռազմավարությունն է՝***

Տնտեսական և սոցիալական ոլորտների բարեփոխումների ճանապարհով հետևողականորեն բարելավել համայնքի բնակչության սոցիալ-տնտեսական պայմանները, բարձրացնել բնակչության կենսամակարդակը:

Գյուղատնտեսության ճյուղի և փոքր ու միջին բիզնեսի զարգացման միջոցով ավելացնել նոր աշխատատեղեր և կանխել արտագաղթը համայնքից:

### ***2.2. Հիմնական նպատակները***

- Ոռոգման համակարգի վերանորոգում, ցանցի ընդլայնում:
- Արոտների ջրարբիացում:
- Խմելու ջրի մատակարարման բարելավում:
- Մշակույթի տան կառուցում:
- Մանկապարտեզի շենքի կառուցում:
- Դպրոցի սպորտդահլիճի կառուցում:
- Բնակավայր-մայրուղի 4,0կմ ճանապարհի ասֆալտապատում:
- Ներհամայնքային ճանապարհների վերանորոգում:
- Դաշտամիջյան ճանապարհների փոսալցում:
- Կոյուղու ցանցի կառուցում:
- Գյուղացիական տնտեսությունների կարողությունների զարգացում:
- Գյուղատնտեսական տեխնիկայի նորացում:
- Համայնքում գյուղատնտեսական մթերքների վերամշակման փոքր և միջին ձեռնարկությունների հիմնում, նոր աշխատատեղերի ստեղծում:
- Անհատական բնակարանային շինարարության խթանում:
- Համայնքի մշակութային կյանքի աշխուժացում, ֆիզիկական կուլտուրայի և սպորտի զարգացում:
- Համայնքում հանգստի գոտու հիմնում:
- Համայնքի սոցիալապես անապահով ընտանիքներին աջակցության կազմակերպում:

### 3. ՀԱՄԱՅՆՔԻ ԲՅՈՒՋԵԻ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐԻ ԳՆԱՀԱՏՈՒՄ ԵՎ ԿԱՆԽԱՏԵՍՈՒՄ

#### 3.1. ՏԵՂԱԿԱՆ ԲՅՈՒՋԵԻ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ

Համայնքում ծառայություններ մատուցելու և ծրագրեր իրականացնելու համար կարևոր նշանակություն ունի համայնքի ֆինանսական միջոցների գնահատումը և կանխատեսումը:

Համայնքի բյուջեն հիմնականում ձևավորվում է հողի հարկից, գույքհարկից և վարձակալության տրված համայնքի սեփականություն հանդիսացող գյուղատնտեսական նշանակության հողերի վարձավճարներից: Վերջին 10 տարիներին համայնքի բյուջեի սեփական եկամուտները կատարվել են 70-100 տոկոսով: Բյուջեի մուտքերի հիմնական մասը նպատակաուղղվել են ընթացիկ աշխատավարձերի ու սոցիալական ապահովության պարտադիր վճարների վճարմանը, խմելու ջրի ներքին ցանցի և խորքային պոմպի վերանորոգման աշխատանքների կատարմանը, ոռոգման ցանցի մասնակի վերանորոգմանը, բնակավայր մտնող և միջհամայնքային ճանապարհների փոսային նորոգմանը, փոքրածավալ ծառայությունների մատուցմանը /աղբահանության կազմակերպում, փողոցների լուսավորության ցանցի վերականգնում, ցանցի սպասարկում և այլն/, սոցիալապես անապահով ընտանիքներին դրամական օգնությունների տրամադրմանը, գազաբաշխիչ ցանցի կառուցման և այլ ծրագրերի իրականացման համար համայնքից պահանջված ներդրումների կատարմանը, տեղական ինքնակառավարման մարմինների գործունեության համար անհրաժեշտ պայմանների ապահովմանը:

Համայնքի բյուջեի ֆինանսական կարողությունները հնարավորություն չեն տալիս լուծելու համայնքում առկա և հրատապ լուծում պահանջող հիմնախնդիրները: Այդ հիմնախնդիրների լուծման համար անհրաժեշտ է պետական մարմինների, հանրապետությունում գործող միջազգային կազմակերպությունների ու հիմնադրամների աջակցությունը:

Համայնքը պատրաստակամ է բաժնեմասային /համաֆինանսավորման/ կարգով մասնակցություն ունենալ այլ կազմակերպությունների կողմից իրականացվող կապիտալ ծախսային ծրագրերին, որի համար համաֆինանսավորման աղբյուր կարող է հանդիսանալ համայնքի բյուջեի սեփական միջոցները, համայնքի սեփականություն հանդիսացող

հողատարածքների օտարումից ստացվող միջոցները, ինչպես նաև համայնքի բնակչության կողմից կատարվող ներդրումները:

**3.2. ՀԱՄԱՅՆՔԻ ԲՅՈՒՋԵԻ ԳՆԱՀԱՏՈՒՄ ԵՎ ԿԱՆԽԱՏԵՍՈՒՄ**

*Հազ. դրամ*

Հ/հ	Եկամուտի տեսակը	2016թ. փաստացի կատարված	2017թ. նախատեսված	2018թ. կանխատեսում	2019թ. կանխատեսում	2020թ. կանխատեսում.
	Եկամուտներ, ընդհամենը	30878.9	32841.5	31831.8	33346.6	33094.2
Ա	Հարկային եկամուտներ	7229.8	9249.1	8239.4	9744.2	9491.8
1	Հողի հարկ	5316.7	7017.6	6167.1	7592.3	7379.7
2	Գույքահարկ	1913.1	2231.5	2072.3	2151.9	2112.1
3	Այլ հարկային եկամուտներ					
Բ	Տուրքեր	60.5	60.0	60.0	60.0	60.0
1	Պետական տուրքեր					
2	Տեղական տուրքեր	60.5	60.0	60.0	60.0	60.0
	Ոչ հարկային եկամուտներ					
1	Համայնքայի սեփ. հողերի վարձավճարներ	1502.7	1539.4	1539.4	1539.4	1539.4
2	Գույքի վարձավճարներ					
3	Տեղական վճարներ		20.0	20.0	30.0	30.0
4	Այլ ոչ հարկային եկամուտներ					
Գ	Պաշտոնական տրանսֆերտներ, դոտացիա	22085.9	21973.0	21973.0	21973.0	21973.0
Դ	Եկամուտներ, կապիտալի գործառնություններից					
Ե	Տարեսկզբի ազատ մնացորդ	6402.6				
Զ	Ֆոնդային բյուջե	28248.1				
	Բյուջեի կատարում/տոկոս/	93.7	100.0	100.0	100.0	100.0

**3.3. ՀԱՄԱՅՆՔԻ ԲՅՈՒՋԵԻ ԱՊԱՌՔՆԵՐԻ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ**

Տարածաշրջանին բնորոշ բնակլիմայական ոչ բարենպաստ պայմանների /կարկտահարություն, երաշտ, ցրտահարություն/, ոռոգման համակարգի քայքայվածության և ոռոգելի հողատարածքների պակասի, համայնքի բնակչության սոցիալական վատ պայմանների, ինչպես նաև համայնքից տևական ժամանակ բացակայող ընտանիքների կողմից հարկային պարտավորությունները չկատարաելու հետևանքով, սեփական

եկամուսնների գծով համայնքում կուտակվել են շուրջ 13047.7 հազար դրամի ապառքներ, որից հողի հարկի գծով՝ 12080.4 հազար դրամ, գույքահարկի գծով՝ 967.3 հազար դրամ և հողերի վարձակալական վճարների գծով՝ 0 դրամ: Ձեռնարկված միջոցառումների և «Հողի հարկի և գույքահարկի արտոնություններ տրամադրելու մասին» ՀՀ օրենքի կիրարկման արդյունքում վերջին 3 տարիների ընթացքում հնարավոր է եղել հավաքագրել մոտ .... հազար դրամ ապառքներ:

Հողի հարկի և գույքահարկի ապառքների 20 տոկոսը անհուսալի են և պատկանում են հողի այն սեփականատերերին, ովքեր շուրջ 10 և ավելի տարիներ ընտանիքով բացակայում են հանրապետությունից, իսկ նրանց հողերը կամ չեն մշակվում կամ առանց համապատասխան պայմանագրի ու պետական գրանցման օգտագործվում են հողի սեփականատերերի հարազատների ու մտերիմների կողմից: Գյուղապետարանը իրավական հիմքեր չունի նշված ապառքները դատական կարգով հողի փաստացի օգտագործողներից գանձելու համար, իսկ աշխատանքի բերումով արտերկրներում հայտնված համայնքի անդամներին հողի սեփականությունից զրկելը համայնքի տեղական ինքնակառավարման մարմինները հարցի լուծման իրատեսական տարբերակ չեն համարում:

01.01.2013թ. դրությամբ համայնքը աշխատավարձի, սոցիալական ապահովության վճարների գծով ապառքներ չունի:

**3.4. ՀՈՂԻ ՀԱՐԿԻ ԳՈՒՅՔԱՀԱՐԿԻ ԵՎ ՀՈՂԻ ՎԱՐՁԱԿԱԼԱԿԱՆ ՎՃԱՐՆԵՐԻ ԱՊԱՌՔՆԵՐԻ ՀԱՎԱՔԱԳՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՅՈՒՅՑ**

Հազ. դրամ

Ապառքի տեսակը	Ապառքը առ. 01.01.16թ. դրությամբ	Ապառքների հավաքման կանխատեսում				Անհուսալի ապառքներ
		2017թ.	2018թ.	2019թ.	2020թ.	
Հողի հարկ	11092.0	12080.4	11586.2	11833.3	11709.7	35%
Գույքահարկ	1093.4	967.3	1033.3	1000.3	1016.8	
Հողի վարձավճար	135.0					

**3.5. ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅՈՒՆ ՎԵՐՋԻՆ 10 ՏԱՐԻՆԵՐԻՆ ՀԱՄԱՅՆՔՈՒՄ ԻՐԱԿԱՆԱՑՎԱԾ ԾՐԱԳՐԵՐԻ ՄԱՍԻՆ**

N	Ծրագրի անվանումը	Իրականաց- նող կազմակեր- պությունը	Ծրագրի ընդհանուր բյուջեն	Այդ թվում		Իրականացման տարեթի վը
				Դոնոր կազմակերպ.	Համայնքի ներդրում	
1.	Խմելու ջրի ներտնտեսային	Համայնք	365.2 հազ. դրամ	0.0	365.0	2008թ.

	ցանցի վերանորոգում:					
2.	Հանրակրթական դպրոցի ջեռուցման համակարգի կառուցում	ՎՈՐԼԴ ՎԻՇՆ	9996.4 հազ.դրամ	0հազ.դրամ	1152.3 հազ.դրամ	2014թ.
3.	Բնակավայրի գազաֆիկացում	Բարեգործական հիմնադրամ	3000.0 հազ. դրամ	0 հազ. դրամ	1000.0 հազ. դրամ	2011թ.
4.	Ներհամայնքային ճանապարհների փոսային նորոգում	<<ՎՀԱ>> պետական ծրագիր, համայնք	1829.0 հազ դրամ	1829.0 հազ դրամ	0 հազ դրամ	2008թթ.
5.	Ներհամայնքային ճանապարհների փոսային նորոգում	<<ՎՀԱ>> պետական ծրագիր, համայնք	1869.5 հազ դրամ	1829.0 հազ դրամ	0 հազ դրամ	2009թթ.
6.	Փողոցների գիշերային ցանցի կառուցում	Համայնք	990.0 հազ. դրամ	0.0	990.0 հազ. դրամ	2009թ.
7.	Գերեզմանոցի ցանկապատում	Համայնք	3514.6 հազ. դրամ	0	3514.0 հազ. դրամ	2011թ.
8.	Զրագծի կառուցում	ԳՏՏԶ ԾԻԳ	4553.277 հազ. դրամ	4553.277 հազ. դրամ	0	2012թ
9.	Հակակարկտային կայանի տեղադրում	Բարեգործական հիմնադրամ	2000.0 հազ. դրամ	1000.0 հազ. դրամ	1000.0 հազ. դրամ	2012թ
10.	Սելաֆատարի մաքրում	համայնքի բյուջե	5810.4 հազ. դրամ	0	5810.4 հազ. դրամ	2012թ.
11.	Մարգահրապարակի ցանկապատում	Համայնք	990.0 հազ. դրամ	0	990.0 հազ. դրամ	2016թ.
12.	Ներհամայնքային ճանապարհների փոսային նորոգում	Համայնք	1007.1 հազ դրամ	0 հազ դրամ	1007.1 հազ դրամ	2015թթ.

**3.6. ՀԱՄԱՅՆՔԻ ԶԱՐԳԱՅՄԱՆ ԾՐԱՔՐՈՒՄ ՆԵՐԱՌՎԱԾ ԱՌԱՋՆԱՀԵՐԹ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԲՅՈՒՋԵՈՎ ՆԱԽԱՏԵՍՎԱԾ ՆԵՐԴՐՈՒՄՆԵՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՅՈՒՅՑ**

N	Ծրագրի անվանումը	Ծրագրի ընդհանուր արժեքը /հազ. դրամ/	Դոնոր կազմակերպության ներդրում /հազ. դրամ/	Համայնքի ներդրում /հազ. դրամ/	Կատարման Ժամկետը /հազ. դրամ/
1.	<i>Շիրակ-Կամո 4,0 կմ ճանապարհի սաֆալտապատում</i>	250000.0	Պետական բյուջե 250000.0	0.0	2018թ.
2.	<i>ՀՀ Շիրակի մարզի Կամոյի համայնքի</i>	8 000.0	Շեն հաս.	800.0	2017թ.

	<i>խմելու ջրի մատակարարման բարելավում</i>		կազմակերպություն		
3.	<i>ՀՀ Շիրակի մարզի Կամո համայնքի համայնքային կենտրոնի կառուցում</i>	120000.0	Պետական բյուջե 120000.0	12000.0	2017թ.
4.	<i>Կամո համայնքի ներհամայնքային և դաշտամիջյան ճանապարհների փոսային նորոգում</i>	2000.0	0.0	2000.0	2018թ.
5.	<i>Մանկապարտեզի կառուցում</i>	120000.0	Պետական բյուջե 120000.0	0.0	2019թ.

**4. ԸՍՏ ԱՌԱՆՁԻՆ ԲՆԱԳԱՎԱՌՆԵՐԻ ԱՌԱՋՆԱՀԵՐԹ ԾՐԱԳՐԵՐԻ, ՆՊԱՏԱԿՆԵՐԻ ԱՌԱՋԱԴՐՈՒՄ և ԿՈՆԿՐԵՏ ԽՆԴԻՐՆԵՐԻ ՁԵՎԱԿԵՐՊՈՒՄ**

Ըստ առանձին բնագավառների ծրագրերի ընտրության և նրանց առաջնահերթության որոշման համար հիմք են հանդիսացել համայնքի ղեկավարի նախընտրական ծրագիրը և նամայնքի ղեկավարի նախընտրական քարոզարշավի ժամանակ համայնքի ընտրողների կողմից տրված պատվիրանները:

Իսկ ծրագրերի իրականացման, արժեքների գնահատման և հնարավոր ֆինանսավորման աղբյուրների բացահայտման համար հիմք են հանդիսացել տեղական բյուջեի ֆինանսական հնարավորությունները, ՀՀ կառավարության տարածքային զարգացման ռազմավարությունը և հանրապետությունում գործող ներդրումային կազմակերպությունների ու հիմնադրամների հետ հաստատած համագործակցության կապերը:

2016- 2020թթ. նախատեսվում է իրականացնել առաջնահերթ լուծում պահանջող հետևյալ ծրագրերը՝

**Ծ Ր Ա Գ Ի Ր թիվ 1**

**ԾՐԱԳՐԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ**

***Շիրակ- Կամո 4,0կմ ճանապարհի ասֆալտապատում***

**ՀԻՄՆԱԽՆԴԻՐԻ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ԾՐԱԳՐԻ ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄԸ**

Շիրակ- Կամո 4,0 կմ ճանապարհը գտնվում են քայքայված և անբարեկարգ վիճակում, առանձին տեղամասեր ձնհալի և անձրևային եղանակների ժամանակ տրանսպորտային միջոցների, գյուղատնտեսական տեխնիկայի և հետիոտն երթևեկության համար դառնում են անանցանելի:

ՀՀ կառավարությունը վերջին տարիներին մեծ կարևորություն է տալիս միջհամայնքային նշանակության ճանապարհների վերանորոգման խնդիրներին:

### **ԾՐԱԳՐԻ ՆՊԱՏԱԿԸ**

Ծրագրի նպատակն է տրանսպորտային միջոցների, գյուղատնտեսական տեխնիկայի և հետիոտն երթևեկության համար ապահովել բարեկարգ և հարմարավետ ճանապարհ:

### **ՎԵՐԱՆՈՐՈԳՄԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԾԱՎԱԼՆԵՐԸ**

1. Ամբողջությամբ ասֆալտապատման է ենթակա Շիրակ-Կամո հանրապետական նշանակության ճանապարհից 4,0 կմ ընդհանուր երկարության ճանապարհը:

### **ԾՐԱԳՐԻ ԽՆԴԻՐՆԵՐԸ**

- Ուսումնասիրել Շիրակ-Կամո հանրապետական նշանակության ճանապարհից 4,0 կմ ընդհանուր երկարության ճանապարհի տեխնիկական վիճակը, ճշտել նորոգման ծավալները, կազմել թերությունների ակտ և պատվիրել ճանապարհի ասֆալտապատման նախագծա-նախահաշվային պաստատոթեր:
- Դիմել ՀՀ Շիրակի մարզպետին Շիրակ-Կամո հանրապետական նշանակության ճանապարհից բնակավայր 4,0 կմ ընդհանուր երկարության ճանապարհի ասֆալտապատման աշխատանքները մարզի հրատապ լուծում պահանջող հիմնախնդիրների լուծման 2018 թվականի ծրագրում ընդգրկելու հարցով:
- Ապահովել ՀՀ կառավարության որոշմամբ սահմանված համայնքներում հրատապ լուծում պահանջող ծրագրերի իրականացման համար պարտադիր համարվող համայնքի բյուջեի սեփական եկամուտների կատարման առնվազն 90 տոկոս ցուցանիշ:
- Ըստ ամենայնի աջակցել ծրագրով նախատեսված աշխատանքների կատարմանը:

### **ԾՐԱԳՐԻ ԾԱՎԱԼՆԵՐԸ ԵՎ ՖԻՆԱՆՍԱՎՈՐՄԱՆ ԱՂՔՅՈՒՐԸ**

Ծրագրով նախատեսվում է ասֆալտապատել Շիրակ-Կամո հանրապետական նշանակության ճանապարհից բնակավայր տանող 4,0 կմ ընդհանուր երկարության:

Ծրագիրը նախատեսվում է իրականացնել պետական բյուջեից ՀՀ Շիրակի մարզին հատկացվող հրատապ լուծում պահանջող հիմնախնդիրների լուծման 2018 թվականի ծրագրի շրջանակներում:

#### **ԾՐԱԳՐԻ ԱՐՂՅՈՒՆՔՆԵՐԸ**

Տրանսպորտային և հետիոտն երթևեկության համար կապահովվի բարեկարգ և հարմարավետ ճանապարհ, կկանխվի տրանսպորտային միջոցների հնարավոր վթարներն ու խափանումները:

#### **ԾՐԱԳՐԻ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐԻ ԳՆԱՀԱՏՈՒՄԸ**

Ըստ նախնական հաշվարկների ծրագրի իրականացման համար կպահանջվի 250.0 մլն. դրամի ներդրում:

#### **ԾՐԱԳՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ԺԱՄԿԵՏՆԵՐԻ ԿԱՆԽԱՏԵՍՈՒՄ**

Ծրագիրն իրականացնել 2018 թվականին:

#### **ԾՐԱԳՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ ՊԱՏԱՄԽԱՆԱՏՈՒ՝**

Կամո համայնքի ղեկավար՝ Ռոբերտ Ղազարյան:

## **Ծ Ր Ա Գ Ի Ը թիվ 2**

#### **ԾՐԱԳՐԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ՝**

#### ***ՀՀ Շիրակի մարզի Կամոյի համայնքի խմելու ջրի մատակարարման բարելավում***

Համայնքի խմելու ջրի մատակարարման սպասարկումն իրականացվում է Կամոյի գյուղապետարանի կողմից:

Համայնքի ջրամատակարարման ներտնտեսային ցանցի ընդհանուր երկարությունը կազմում է 10500 մ: Այն կառուցվել է 1950 թվականին և երբևէ հիմնական նորոգման չի ենթարկվել: Ջրատար խողովակների մոտ 50%-ը քայքայված են և ենթարկված են կոռոզիայի: Հաճախակի են ցանցի վթարներն ու դրանց հետևանքով ջրի աղտոտումները, ծայրամասային առանձին թաղամասեր ապահովված չեն խմելու ջրով և իրենց կարիքների

համար անհրաժեշտ ջուրը մինչև 200 մ հեռավորությունից տեղափոխում են դույլերով և սայլակներով: Վերանորոգման կարիք ունեն պոմպակայանը և օրական կարգավորման ջրամբարները:

Համայնքի բնակիչների ուժերով և բյուջեի միջոցներով անցած տարիներին պարբերաբար կատարվել են ջրագծերի առանձին հատվածների վերանորոգում, օրական կարգավորման ջրամբար տանող 300 գծ. մ. խողովակաշարի փոխարինում նորով, սակայն այդ աշխատանքները բավարար համարել չի կարելի:

## **ԾՐԱԳՐԻ ՆՊԱՏԱԿԸ**

Ծրագրի նպատակն է բարելավել համայնքի բնակչության խմելու ջրի մատակարարումը, կանխել ջրագծերի վթարներն ու կորուստները, հնարավոր աղտոտումները: Օրական կարգավորման 1 ջրամբարի վերականգնման, ջրի քլորացման համար համապատասխան սարքավորումների տեղադրման միջոցով ապահովել էկոլոգիապես մաքուր, անվտանգ և շուջօրյա ջրի մատակարարում: Սանցի առանձին հատվածների ընդլայնման շնորհիվ բնակավայրի ծայրամասային բնակելի տներն ապահովել խմելու ջրով: Բարելավել բնակչության կենցաղային պայմանները, թեթևացնել հատկապես կանանց և երեխաների ֆիզիկական ծանրաբեռնվածությունը:

## **ԾՐԱԳՐԻ ԽՆԴԻՐՆԵՐԸ**

- Ուսումնասիրել խմելու ջրի ներհամայնքային ցանցի տեխնիկական վիճակը, ճշտել ջրատարների առավել քայքայված տեղամասերը, վերանորոգման և ցանցի ընդլայնման ծավալները և կազմել թերությունների ակտ:
- Ուսումնասիրել 240 տոննա տարողության օրական կարգավորման ջրամբարների տեխնիկական վիճակը, վերանորոգման ծավալներն ու ջրի քլորացման համար համապատասխան սարքավորումների տեղադրման հնարավորությունները:
- Պատվիրել նախագծա- նախահաշվային փաստաթղթեր:
- Համապատասխան մասնագետների ներգրավմամբ ուսումնասիրել 2-րդ հորատանցքի շահագործման և խորքային պոմպի տեղադրման տեխնիկական պայմաններն ու հնարավորությունները:
- Ճշտել ծրագրի իրականացման համար պահանջվող ֆինանսական միջոցներն ու աղբյուրները:

- Ծրագրով նախատեսված օժանդակ աշխատանքներն իրականացնել Շեն հասարակական կազմակերպության ծրագրի աջակցությամբ, որի համար կազմել համապատասխան հայտ-առաջարկ և սահմանված ժամկետներում ներկայացնել ծրագրի իրականացման գրասենյակ:

### **ԾՐԱԳՐԻ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ**

Կբարելավվի համայնքի բնակչության խմելու ջրի մատակարարումը, կկանխվեն ջրի կորուստները և հնարավոր աղտոտումները, ծայրամասային բնակելի տները կապահովվեն խմելու ջրով: Համայնքում կապահովվի շուրջօրյակ ջրամատակարարում:

Կբարելավվի բնակչության կենցաղային պայմանները, կթեթևանա հատկապես կանանց և երեխաների ֆիզիկական ծանրաբեռնվածությունը:

### **ԾՐԱԳՐԻ ԾԱՎԱԼՆԵՐԸ ԵՎ ԱՆՀՐԱԺԵՇՏ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐԸ**

Ըստ նախնական ուսումնասիրության արդյունքների բնակավայրի ջրամատակարարման բարելավման համար անհրաժեշտ է իրականացնել հետևյալ աշխատանքները՝

- 500զձ.մ. երկարության խմելու ջրի ներտնտեսային ցանցի վերանորոգում:
- 1000զձ.մ. նոր ջրատարի կառուցում:
- 240 խ.մ տարողության օրական կարգավորման երկու ջրամբարների վերանորոգում:
- Ջրի քլորացման համար համապատասխան սարքավորումների տեղադրում:

Ըստ նախնական հաշվարկների ծրագրի իրականացման համար կպահանջվի 8 մլն. դրամի ներդրում:

### **ԾՐԱԳՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ՖԻՆԱՆՍԱՎՈՐՄԱՆ ԱՂԲՅՈՒՐՆԵՐԸՆ ՈՒ ԿԱՏԱՐՄԱՆ ԺԱՄԿԵՏՆԵՐԸ**

Ծրագիրն իրականացնել համայնքի բյուջերի և Շեն հասարակական կազմակերպության կողմից:

Ծրագիրն իրականացնել՝ 2017 թվականի ընթացքում:

Շեն հասարակական կազմակերպության կողմից ծրագրի աջակցությամբ 2017 թվականի կատարել 3500 մարդ/օր ծավալի օժանդակ աշխատանքներ:

**Ծրագրի փուլն իրականացնել 2017 թվականի հունիս-սեպտեմբեր ամիսներին**

Նախատեսել կատարել հետևյալ աշխատանքները՝

- 500գծ.մ. երկարության խմելու ջրի ներտնտեսային ցանցի վերանորոգում:
- 1000գծ.մ. նոր ջրատարի կառուցում:
- 240 խ.մ տարողության օրական կարգավորման ջրամբարի վերանորոգում:

### **ԾՐԱԳՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ ՊԱՏԱՄԽԱՆԱՏՈՒ՝**

Կամոյի համայնքի ղեկավար՝ Ռոբերտ դազարյան:

### **ԾՐԱԳՐԻ ԱԶԱԿԻՑՆԵՐ՝**

Շեն հասարակական կազմակերպության կողմից ծրագրի գրացենյակ, համայնքի ավագանու անդամներ, համայնքի բնակիչներ:

## **Ծ Ր Ա Գ Ր Ի Ր թիվ 3**

### **ԾՐԱԳՐԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ**

*ՀՀ Շիրակի մարզի Կամո համայնքի համայնքային կենտրոնի կառուցում*

### **ՀԻՄՆԱԽՆԴԻՆԻ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ԾՐԱԳՐԻ ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄԸ**

Նախատեսվում է կառուցել համայնքային կենտրոնի: Համայնքային կենտրոնի համայնքի բնակչության հանգստի և ազատ ժամանցի կազմակերպման միակ օջախն է: Համայնքային կենտրոնի բացակայության պատճառով մշակութային միջոցառումներ գրեթե չեն կազմակերպվում և այն չի ծառայում համայնքի բնակչության կարիքների համար: Համայնքային կենտրոնի կառուցումից հետո անհրաժեշտ է ապահովել գույքով և սարքավորումներով: Համայնքի ուժերով հնարավոր չէ եղել կառուցել համայնքային կենտրոնի:

Տեղական բյուջեի սահմանափակ միջոցներով հնարավոր չէ իրականացնել համայնքային կենտրոնի կառուցման և գույքի ձեռքբերման աշխատանքներ: Ծրագրի իրականացման համար անհրաժեշտ է պետական մարմինների, ներդրումային կազմակերպությունների ու հիմնադրամների աջակցությունը:

### **ԾՐԱԳՐԻ ՆՊԱՏԱԿԸ**

Ունենալ համայնքային կենտրոնի, այն համալրել ժամանակակից գույքով և հարմարավետ պայմաններ ստեղծել համայնքի բնակչության հանգստի ու ազատ ժամանցի կազմակերպման, երիտասարդների մշակութային ու գեղագիտական դաստիարակության համար: Վերականգնել համայնքի մշակութային նախկին ավանդույթները:

## **ԾՐԱԳՐԻ ԽՆԴԻՐՆԵՐԸ**

- Մշակել և Հայաստանի սոցիալական ներդրումների հիմնադրամին /ՀՄՆՀ / ներկայացնել մշակույթի տան կառուցման և գույքի համալրման ծրագիրը:
- Հարցի առնչությամբ դիմել ՀՀ Շիրակի մարզպետի աջակցությանը:
- Պատվիրել համայնքային կենտրոնի կառուցման նախագծա-նախահաշվային փաստաթղթերը և ապահովել համապատասխան տեխնիկական պայմաններ:
- Համայնքում ստեղծել աշխատանքային խումբ, ապահովել ծրագրի կառավարումը և աշխատանքների կազմակերպումը:
- Ապահովել ՀՄՆՀ ծրագրի շրջանակներում համայնքից պահանջվող 10 տոկոս ներդրումը:
- Ըստ ամենայնի աջակցել ծրագրի իրականացման աշխատանքներին:
- Ապահովել ծրագրի կենսունակությունը:

## **ԾՐԱԳՐԻ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ**

Համայնքային կենտրոնի կառուցման և այն ժամանակակից գույքով, երաժշտական գործիքներով և սարքավորումներով համալրելու միջոցով հարմարավետ պայմաններ ստեղծել համայնքի բնակչության հանգստի ու ազատ ժամանցի կազմակերպման, երիտասարդների մշակութային ու գեղագիտական դաստիարակության համար:

## **ԾՐԱԳՐԻ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐԻ ԳՆԱՀԱՏՈՒՄ**

Ծրագիրն իրականացնել Հայաստանի հանրապետության պետական բյուջեի ֆինանսավորմամբ:

Ըստ նախնական հաշվարկների ծրագրի իրականացման համար կպահանջվի 120.0 մլն. դրամի ներդրում, որի 10 տոկոսը՝ գումարով 12,0 մլն դրամ, պարտավորվում է ապահովելու համայնքը:

## **ԾՐԱԳՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ԺԱՄԿԵՏՆԵՐԻ ԿԱՆԽԱՏԵՍՈՒՄ**

Ծրագիրը իրականացնել 2017 թվականի ընթացքում:

#### **ԾՐԱԳՐԻ ԿԵՆՍՈՒՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ՝**

Համայնքի բյուջեի միջոցներով ապահովել համայնքային կենտրոնի պահպանումը և սպասարկումը:

#### **ԾՐԱԳՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ ՊԱՏԱՄԽԱՆԱՏՈՒ՝**

Կամո համայնքի ղեկավար՝ Ռոբերտ Ղազարյան:

#### **ԾՐԱԳՐԻ ԱԶԱԿԻՑՆԵՐ՝**

Հայաստանի սոցիալական ներդրումների հիմնադրամ, համայնքի ավագանու անդամներ, համայնքի բնակիչներ:

### **Ծ Ր Ա Գ Ի Ր թիվ 4**

#### **ԾՐԱԳՐԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ**

*ՀՀ Շիրակի մարզի Կամո համայնքի ներհամայնքային և դաշտամիջյան ճանապարհների փոսային նորոգում:*

#### **ՀԻՄՆԱԽՆԴՐԻ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ԾՐԱԳՐԻ ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄԸ**

Կամո համայնքի ներհամայնքային և դաշտամիջյան ճանապարհները գտնվում են քայքայված և անբարեկարգ վիճակում, առանձին տեղամասեր անանցանելի են հետիոտների, տրանսպորտային միջոցների և գյուղատնտեսական տեխնիկայի համար:

#### **ԾՐԱԳՐԻ ՆՊԱՏԱԿԸ**

Ծրագրի նպատակն է գուղատնտեսական աշխատանքների իրականացման համար, ինչպես նաև համայնքի տրանսպորտային և հետիոտն երթևեկության համար ապահովել բարեկարգ և հարմարավետ ճանապարհներ:

Երթևեկելի դարձնել համայնքի քայքայված և անանցանելի փողոցները, գյուղատնտեսական աշխատանքների իրականացման համար բեռնատարների և գյուղատնտեսական մեքենաների համար ապահովել անվտանգ երթևեկություն, կանխել վթարային իրավիճակները և բերքի հնարավոր կորուստները:

## ՎԵՐԱՆՈՐՈՉՄԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԾԱՎԱԼՆԵՐԸ

1. Հանքակոպճի միջոցով փոսայցման և ավազե ծածկույթով հարթեցման են ենթակա համայնքի առավել քայքայված և անանցանելի ներհամայնքային 18,0 կմ. ընդհանուր երկարության ճանապարհահատվածներ՝ 18000քառ.մ. ընդհանուր մակերեսով, այդ թվում՝

Փողոց թիվ 1 – 1200զծ.մ. լայնությունը՝ 5մ. մակերեսը՝ 6000քառ.մ.

Փողոց թիվ 2 – 500զծ.մ. լայնությունը՝ 5մ. մակերեսը՝ 2500քառ.մ.

Փողոց թիվ 3 – 400զծ.մ. լայնությունը՝ 5մ. մակերեսը՝ 2000քառ.մ.

Փողոց թիվ 4- 400զծ.մ. լայնությունը՝ 5մ. մակերեսը՝ 2000քառ.մ.

Փողոց թիվ 15 – 500զծ.մ. լայնությունը՝ 5մ. մակերեսը՝ 2500քառ.մ.

Փողոց թիվ 20 – 600զծ.մ. լայնությունը՝ 5մ. մակերեսը՝ 3000քառ.մ.

Փողոց թիվ 22 – 500զծ.մ. լայնությունը՝ 5մ. մակերեսը՝ 2500քառ.մ.

Ընդամենը՝ 4100զծ. մ. մակերեսը՝ 18000քառ.մ.

2. Հանքակոպճի միջոցով փոսայցման և ավազե ծածկույթով հարթեցման են ենթակա դաշտամիջյան ճանապարհների 1.5 կմ ընդհանուր երկարություն տարբեր տեղամասեր՝ 6000 քառ.մ. ընդհանուր մակերեսով:

Այդ թվում՝

«Տնամերձ» կոչվող հանդամաս՝ 400 զծ.մ. երկարություն, 1600 քառ.մ. մակերեսով.

«Տնամերձ» արևմտյան վերջնամասի հանդամաս՝ 250 զծ.մ. երկարություն, 1000 քառ.մ. մակերեսով.

«Մակո արտեր» կոչվող հանդամաս՝ 1000 զծ.մ. երկարություն, 4000 քառ.մ. մակերեսով.

«Վառվառ» կոչվող հանդամաս՝ 7000 զծ.մ. երկարություն, 28000 քառ.մ. մակերեսով.

«Մայր կանալից » 5-րդ կա ն ա լ տանող հանդամաս՝ 1200զծ.մ. երկարություն, 6000քառ.մ.մակերես

«Խաչքար» կոչվող հանդամաս՝ 2200 զծ.մ. երկարություն, 8800 քառ.մ. մակերեսով.

Ընդամենը՝ 12050 զծ. մ., մակերեսը՝ 49400 քառ. մ.:

Անհրաժեշտ է իրականացնել վերանորոգվող ներհամայնքային ճանապարհների շրջակայքերի սանիտարական մաքրման, շինարարական և կենցաղային աղբի տեղափոխման աշխատանքներ:

Սանիտարական մաքրման է ենթակա 10000 քառ. մ. տարածք: Ըստ նախնական հաշվարկների անհրաժեշտ է մաքրել և տեղափոխել մոտ 10 խ.մ. կենցաղայի աղբ:

## ԾՐԱԳՐԻ ԽՆԴԻՐՆԵՐԸ

- Ծրագրի իրականացման աշխատանքները կազմակերպելու համար ստեղծել աշխատանքային խումբ:
- Ուսումնասիրել նորոգման ենթակա ներհամայնքային ճանապարհների տեխնիկական վիճակը, ճշտել նորոգման ծավալները, կազմել թերությունների ակտ և աշխատանքների իրականացման ժամանակացույց :
- Ճանապարհների նորոգումը կատարել խճապատման, սալարկման և մանրահատիկ ավազե ծածկույթի իրականացման միջոցով:
- Ճանապարհների նորոգման, շրջակայքերի սանիտարական մաքրման աշխատանքներին ներգրավել համայնքում առկա տրանսպորտային, տեխնիկական միջոցներն ու համայնքի բնակչությանը:

### ԾՐԱԳՐԻ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ

Համայնքի տրանսպորտային և հետիոտն երթևեկության համար կապահովվի բարեկարգ և հարմարավետ ճանապարհներ: Երթևեկելի կդառնան համայնքի դաշտամիջյան ճանապարհահատվածները:

### ԾՐԱԳՐԻ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐԻ ԳՆԱՀԱՏՈՒՄԸ

Հ/հ	Աշխատանքների նկարագրությունը, նյութերի անվանումը,	Չափի միավոր	Քանակը	Միավորի արժեքը /դրամ/	Ընդհանուր արժեքը /դրամ/	Նշումներ
<b>Տեխնիկական միջոցների շահագործում</b>						
1	Էքսկավատորի շահագործում /հարթեցման աշխատանքներ/	Ժամ	220	2500	550000	
2	Բարձիչ մեխանիզմով բարձման աշխատանքների իրականացում՝ -հանքակոպիճի բարձում՝ 150խ.մ. -ավազի բարձում՝ 110խ.մ. -շինարարական և կենցաղային աղբի բարձում՝ 20խ.մ.	Խոր.մ	250	1200	300000	
3	Ինքնաթափի միջոցով հանքակոպիճի, ավազի և աղբի տեղափոխում	Խոր.մ	250	1000	250000	
	<b>Ընդամենը՝ Տեխնիկական միջոցների շահագործում</b>	X	X	X	950000	
<b>Աշխատանք</b>						

1.	Ճանապարհների շրջակայքերի սանիտարական մաքրում	Քառ.մ	10000	X	X	Համայնքի անդամներ
<i>Ընդամենը աշխատանք</i>		X	X	X	X	
<i>Նյութեր</i>						
1	Հանքակոպիճ	Խոր.մ	100	X	X	Համայնքի ներդրում
2	Ավազ	Խոր.մ	80	X	X	Համայնքի ներդրում
3	Դիզելային վառելիքային նյութ	լիտր	2000	450	900000	
<i>Ընդամենը նյութեր</i>					<i>900000</i>	
<i>Ընդամենը ծախսեր</i>					<i>2000000</i>	

Ծրագրի իրականացման համար կպահանջվի 2000.0 հազ. դրամի ներդրում,

Ծրագիրն իրականացնել համայնքի բյուջեի միջոցներով:

Ծրագրով նախատեսված օժանդակ աշխատանքների կատարումն իրականացնել համայնքի բնակչության ուժերով:

**ԾՐԱԳՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ԺԱՄԿԵՏՆԵՐԻ ԿԱՆԽԱՏԵՍՈՒՄ**

Ծրագիրն իրականացնել 2018 թվականի հունիս-սեպտեմբեր ամիսներին:

**ԾՐԱԳՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՈՒ՝**

Կամո համայնքի ղեկավար՝ Ռոբերտ Ղազարյան:

**ԾՐԱԳՐԻ ԱԶԱԿԻՑՆԵՐ՝**

Կամո համայնքի ավագանու անդամներ, գյուղապետարանի աշխատակազմ, համայնքի բնակիչներ:

**Ծ Ր Ա Գ Ր Ի Ր թիվ 5**

**ԾՐԱԳՐԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ**

*Մանկապարտեղի շենքի կառուցում*

*ԾՐԱԳՐԻ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ*

Ծրագրով նախատեսվում է կառուցել մանկապարտեղի շենք կոմունալ հարմարություններով, ջեռուցմամբ ու տարածքի բարեկարգմամբ:

**ԾՐԱԳՐԻ ՆՊԱՏԱԿԸ**

Ծրագրի նպատակն է ունենալ մանկապարտեզի շենքի կապիտալ կառույց, կոմունալ բոլոր հարմարություններով ու բարեկարգված կից տարածքով:

#### *ԾՐԱԳՐԻ ԽՆԴԻՐՆԵՐԸ*

- Նախագծա-նախահաշվային փաստաթղթերի պատվիրում,
- Սպասարկման տարածքի բարեկարգում,
- Մրցութային կարգով շինարարության իրականացում,
- Մանկապարտեզի շենքի գույքավորում,
- Ֆինանսական միջոցների կուտակում ու ֆինանսական այլ աղբյուրների հայթհայթում:

#### *ԾՐԱԳՐԻ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐԻ ԳՆԱՅԱՏՈՒՄՆ ՈՒ ՖԻՆԱՆՍԱՎՈՐՄԱՆ ԱՐԲՅՈՒՐԸ*

Ծրագրի ֆինանսական միջոցները գնահատվում են 120.0 մլն դրամ, ծրագիրը նախագտեսված է իրագործել պետական բյուջեի ֆինանսական միջոցներով: Անհրաժեշտ է աշխատանք տանել ֆինանսավորման այլ աղբյուրներ փնտրելու ուղղությամբ՝ բարերարներ, ՀՀ կառավարության հատկացում, հանգանակում և այլն:

#### *ԾՐԱԳՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ԺԱՄԿԵՏՆԵՐԸ*

Ծրագրի իրականացման ժամկետ է նախատեսվում 2019 թվականին:

#### *ՄՊԱՍՎՈՂ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ*

Ծրագրի իրականացմամբ համայնքում կգործի նախակրթական հիմնարկ 60 երեխաների համար, իր բոլոր կոմունալ հարմարություններով, խաղահրապարակով ու սպասարկող տարածքով:

#### *ԾՐԱԳՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՆՈՂՆ ՈՒ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՈՒՆ*

Ծրագիրը իրականացվելու է համայնքի ղեկավարի աշխատակազմի ղեկավարությամբ ու վերահսկողությամբ: Ծրագրի իրականացման պատասխանատուն է համայնքի ղեկավար Ռոբերտ Ղազարյան:

#### **ԾՐԱԳՐԻ ԱԶԱԿԻՑՆԵՐ՝**

Կամո համայնքի ավագանու անդամներ, գյուղապետարանի աշխատակազմ, համայնքի բնակիչներ:

## **5. ՀԱՄԱՅՆՔԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՀՆԳԱՄՅԱ ԾՐԱԳՐԻ ՀԻՄՆԱԿԱՆ ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐԸ**

N	Ցուցանիշի անվանումը	Չափի միանոր	2016թ. փաստացի	2017թ. կանխատեսում	2018թ. կանխատեսում	2019թ. կանխատեսում	2020թ. կանխատեսում
1	2	3	4	5	6	7	8
1	Համայնքի տարածքը	հա	2418.08	2418.08	2418.08	2418.08	2418.08
2	Բնակչության թիվը	մարդ	1504	1522	1535	1546	1555
3	Տն. տնտեսությունների թիվը	ընտ.	331	333	335	338	343
4	Ծնունդը		20	22	25	28	30
5	Մահացությունը	մարդ	11	10	8	0	0
6	Աշխատունակ բնակչություն	մարդ	1363	1370	1375	1378	1380
7	Զբաղվածները ընդամենը այդ թվում ըստ տնտեսության ճյուղերի՝	մարդ	1210	1215	1220	1225	1230
	ա/ գյուղատնտեսություն /թերի բեռնվածությամբ/	մարդ	980	985	987	992	998
	բ/արդյունաբերություն	մարդ	0	0	0	0	
	գ/շինարարություն	մարդ	35	47	48	50	51
	բ/ ծառայությունների ոլորտ.	մարդ	74	76	77	78	81
	դ/այլ ոլորտներ	մարդ	110	111	115	120	120
8	Գործազրկության մակարդակը	%	13	12	11	10	8
9	Առևտրի և հասարակական սննդի օբյեկտների թիվը	հատ	3	3	3	3	3
10	Համայնքային սեփականության վարելահողեր	հա	906,5	908,5	908,5	908,5	908,5
11	Պահուստային հողերի օգտագործման մակարդակը	%	0				
12	Խմելու ջրի ներհամայնքային ցանցի երկարությունը	կմ	10,5				
13	Ներհամայնքային ոռոգման ցանցի երկարությունը	կմ	34.6				
14	Ոռոգման համակարգի տակ ընկած հողեր	հա	869.3				
15	Ներհամայնքային փողոցների և ճանապարհների երկարությունը	կմ	8				
16	Չբարեկարգված փողոցների և ճանապարհների երկարությունը	կմ	6				
17	Ընդամենը բնակ -ֆոնդ այդ թվում՝	հատ/ ք.մ	48226				
	-Համայնքային	հատ ք.մ					
	-Մասնավոր բնակ. ֆոնդ	հատ ք.մ	48226				
18	Բնակարանի կարիքավոր ընտանիքերի թիվը	հատ	45				
19	Մեկ շնչին ընկնող ջրի սպառումը	լիտր/ օր	6				
20	Ջրի կորուստները ցանցում	%	12				
21	Սովորողների թիվը հանրակրթական դպրոցում	մարդ	161				
22	Երեխաների թիվը մանկապարտեզում	մարդ					
23	Գյուղապետարանի և ենթակառուցվածքների աշխատողների թիվը	մարդ					

